

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԸ

Երիտասարդ թիւրքերուն Օսմանլի կուսակցութիւնը իր թերթովը Ժընէվէն Լոնտոն փոխադրուեցաւ: Իսլամ յեղափոխականները երբ կը թողուն երկիր մը որ քաղաքական կարևորութիւն չունի, եւ կուզան հաստատուիլ այնպիսի միջավայր մը որուն ազդեցութիւնը ամենահզօր է Արևելքի վրայ, անշուշտ նպատակ առաջադրած են եւրոպական աշակցութեան հետամտիլ ըզմանքներուն իրականացմանը համար: Երիտասարդ թիւրքերուն շարժումները և գործունէութիւնը մեր խորին ուշադրութիւնը կը գրաւեն: Մենք թիւրքիոյ Հայերս կարող չենք անտարբեր մնալ օսմանեան կայսրութեան մէջ պատահած ո՛ր և է գէպքի, ո՛ր և է քաղաքական անցքի. ու պարտաւոր ենք մանրագնանին դիտել թիւրքիոյ իսլամներուն մտքին ուղղութեան ամէն երևոյթները:

Թիւրք յեղափոխականները այն միջոցին որ կուզան զետեղուիլ այն քաղաքը ուր երկար առնէ ի վեր կը գտնուինք և մենք, միևնոյն միջոցին Պոլիս ալ Եւրոպական պետութեանց կը դիմեն անոնց միջամտութիւնը խնդրելու համար որպէս զի վախճան մը դրուի թիւրքիոյ արդի վարչական դրութեան: Տառապեալ թիւրքերու ներկայացուցիչները ուրեմն իրենց փրկութիւնը կը սպասեն Եւրոպայէն որուն վրայ և մենք յուսադիր գտնուեցանք քսան տարի առաջ: Հակավարչական պատերազմը մղելու համար մենք հայերս ու իսլամ զժգոհները երկու հակոտնեայ ուղիներէ ճամբայ ելլելէ յետոյ ահա յանկարծ միացման կէտի մը վրայ իրարու կը հանդիպինք: Թիւրքերը առանց եւրոպական միջամտութեան ակնդէտ մնալու պարզապէս իրենց ներքին ուժերովը յաջողելու ծրագիր մը գործադրել ուզեցին. մենք Հայերս մեր ամբողջ յոյսը մեծ պետութեանց բարեացակամութեանը վրայ դրինք: Բայց եկաւ օր մը որ մեր ներքին ուժերուն դիմուի պէտքը զգացինք. իսկ Երիտասարդ թիւրքերն ալ Եւրոպայի օգնութեանը ակնկառոյց մնալու հարկին մէջ գտնուեցան: Սակայն ո՛չ մենք մեր չուկէտը լքած էինք, ո՛չ ալ թիւրքերը իրենցը, ուստի իրարու հանդիպումներս

տնխուսափելի պատահականութիւն մը պիտի ըլլար: Եւ ահա հիմակ օսմանեան պետութեան մէջ հասարակաց թշնամիին դէմ երկու գունդ կը դանուին, իրարմէ անշատ, բայց իրարու համանման ծրագիրներով, իրարու համանման միջոցներով կուսելու հետամուտ: Մենք հայերս մեր ներքին ուժը ու եւրոպական օժանդակութիւնը բերել իրարու համերաշխել կը ջանանք. Երիտասարդ թիւրքերն ալ ճիշտ ու ճիշտ այդ միևնոյն յատակագծով կը գործեն: Հնարաւոր պիտի ըլլայ այդ երկու գունդերը միացնել. իրենց յաղթանակին ապահովութեանը համար այդ երկու մարմինները պիտի ուզեն զինակցիլ: Հարցումներ են որոնց որոշ պատասխան մը տալու անկարող ենք. անձանօթին հանդէպ կը զրտնուինք:

Այս հանդէսին ծրագիրն է մեր ազգային կեանքին հետ մօտէն կամ հեռուէն, ուղղակի կամ անուղղակի, յարաբերութիւն ունեցող ամէն խնդիր, ամէն երևոյթ բազմակողմանի տեսութեամբ ուսումնասիրել, ազգային միտքը լուսաբանելու առաջադրութեամբ. ուստի եւ Երիտասարդ թիւրքերուն հետ Հայոց յարաբերութեանց ապագան մօտաւորապէս նախատեսելու համար, ուրիշ բան չենք կրնար ընել բայց եթէ իրական կացութիւն մը քննել և զայն ազգին ուշադրութեանը ներկայացնել:

* *

Թիւրքիան բարեք վարչութեամբ օժտելու նպատակաւ իսլամներու կողմէն քրիստոնեայ պետութեանց եղած դիմումները օգտակարապէս պիտի ծառայեն Հայոց դէմ իսլամական ռիսկալութեան բարձումին ձգտող քաղաքականութիւնը նպաստաւորելու: Սան-Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագիրներէն ետքը իսլամները սկսան ներքենապէս խուլ առեւտրութիւն տածել մեզի դէմ: Մեզի կ'ամբաստանէին թէ իսլամական կայսրութեան ներքին գործերուն մէջ քրիստոնէական միջամտութիւն հրաւերելով կուզէինք իսլամութիւնը տկարացնել, եւ զայն քրիստոնէութեան լուծին ներքեւ դնել: Իսլամական անձնասիրութիւնը իրաւի կամ յանդիման ուռած էր: Այն օրը որ միևնոյն իսլամները, աստիճանով ունենալով խալիֆական ընտանիքին անդամներէն մին, իրենց ալ այդ միևնոյն քը-

ըխտոնեայ պետութեանց միջամտութիւնը կը հրաւիրեն օսմանեան կայսրութեան ներքին գործերուն մէջ, չեն կրընար այլ ևս մեր քսան տարուան քաղաքականութիւնը իբր հակախաղաղական նկատել: Օսմանեան կայսրութեան հայ եւ իսլամ ժողովուրդներուն միջեւ ժամանակակից հակառակութեան մեծագոյն շարժառիթը այլ եւս կրնայ տկարանալ:

Իսլամները երբ քրիստոնեայ պետութեանց կը դիմեն միննոյն ժամանակ չեն ուզեր զոհել իրենց մահմետական գաղափարները և զգացումները: Քրիստոնեայ աշխարհն ալ մահմետականներէն այդպիսի զոհողութիւն մը ո'չ կը պահանջէ, ո'չ ալ պահանջելու իրաւունք ունի: Պարզապէս քաղաքական խնդիրներ են որ կը յուզուին: Թիւրքիոյ վարչութեան բարուցումովը օսմանեան կայսրութեան փրկութիւնը ապահովելու խորհուրդն է որ պիտի իրականանայ կամ պիտի վիժի: Անցեալին մէջ Անգլիա և Ֆրանսա Թիւրքիան պատու պարելով արտաքին թշնամիներու դէմ, միանգամայն անոր ներքին բարեկարգութեանը հոգածու գտնուեցան, հիմա Երիտասարդ-Թիւրքիան այդ անցեալին վերակենդանացումն է որ կը խնդրէ: Սակայն չկրնար մոռնալ թէ բարեկարգութեանց համար Եւրոպայի հոգածութիւնը զլիարարապէս քրիստոնէից շուրջը կ'ամփոփուէր. եւ այժմ մենք Հայերս ոչ թէ սպասողական դիրքով շնորհ մը կ'աշխարհակալենք, այլ իրաւունք մը կը պահանջենք մեր արիւնին ուժովը: Եւրոպայի առջեւ հայկական խնդիր մը կայ. քրիստոնեայ պետութիւնները պարզապէս զուտ իսլամական շահերու եւ նկատումներու տեսակէտովը չէ որ պիտի ուզեն լսել Երիտասարդ Թիւրքիոյ ձայնը: Իսլամական ազատասէր Կուսակցութիւնը պէտք է ուրեմն իր ծրագրին մէջ յստակօրէն պարզէ քրիստոնէից տրուելիք իրաւունքները եւ անոնց գործադրութիւնը ապահովող միջոցները:

Թիւրք ազատասէր կուսակցութիւնը օսմանեան կայսրութեան վերականգնումին համար երկրին արդի իրական կացութեան ըմբռնումովը պատրաստուած որոշ ծրագիր մը չունի: Խորհուրդներ կը յղանայ առանց գանձնէ ճշգրիտ, որոշ գծերով ներկայացնելու: Բայց թէ Օսմանլը, թէ Մեշիքեթ, թէ Տամատ Մահմուտ փաշա իրենց հրատարակութիւններովը իսլամութեան հզօրացումին գատը կը պաշտպանեն: Չենք կրնար տարակուսիլ որ երբ Թիւրքիոյ բարձրագոյն վարիչները Երիտասարդ Թիւրքերը ըլլան, ասոնք միշտ մահմետականութեան զօրավիգները պիտի մնան և պիտի աշխատին իսլամ տարրին դիրքը բարձր և հզօր պահելու: Ինչպէս հինգ զարու տեւողութեանը նոյն եւ ապագային ալ օսմանեան իշխանութիւնը միշտ իբր աստուածպետական կառավարութիւն մը պիտի ներկայանայ, քաղաքական ուղղութիւնը կրօնական տեսութեանց ենթարկելով: Այս հեռապատկերը մեզի չխտրուեցնէր եթէ իսլամները օրուան իրականութիւնը հիմնովին

հասկնալու կարող ըլլան, ինչպէս որ մենք ալ քաջ ըմբռնած ենք այն ծանրածանր հարկերը որոնց պահանջումներէն կարող չեն խոյս տալ նոյն իսկ էն ազատամիտ, ըսենք նաև՝ էն չհատացող իսլամ քաղաքագէտներն ալ:

Օսմանեան կայսրութիւնը որքան ատեն որ տեւ մահմետականութիւնը միշտ երկրին գերագոյն վարիչը պիտի ըլլայ. ու մենք հայերս չենք կրնար բողոքարկու ձայն մը բարձրացնել այս անխուսափելի տիրապետութեան դէմ: Պէտք է իրականութեան հետ դէմ առ դէմ գտնուինք, եւ ոչ թէ վերացական գաղափարներու ետեւէն վազվատենք շրջապատ:

Այսօրուան թրքական կայսրութիւնը չկրնար եւրոպական ո' և է տէրութեան մը հետ բազմապատկիլ. իր քաղաքական գոյութիւնը հիմնուած է կրօնական գաղափարի մը վրայ: Մահմետականացած բազմաթիւ ցեղեր որոնք հասարակաց հայրենիք մը չունին, իրարու հետ միացած են խորհրդանշանով մը որ է Խալիֆ սուլթանը. իրենց միութեան յօդակապը իսլամութիւնն է: Իկն օրը որ սուլթան մը իր կայսրութիւնը զուտ աշխարհական իշխանութեամբ կազմակերպելու հետամտի, այդ բոլոր մահմետականացած ցեղերուն համար միևնոյնն է, և անշուշտ լաւագոյն բազմաւորութիւն մը պիտի ըլլայ, ուրիշ ո' եւ է վեհապետի մը իշխանութեանը ներքև ապրիլ, բաւական է որ իրենց իսլամութիւնը պահպանեն: Անգլիոյ թաշուհին հպատակ իսլամները նիւթապէս շատ աւելի երջանիկ են քան թէ սուլթանին հպատակները, որոնք սակայն բարոյական առաւելութիւն մը ունին՝ իրենց վեհապետին կրօնական հանգամանքը, որուն շնորհիւ զգալի չըլլար, գոնէ իրենցմէ շատին համար, թէ օտար ցեղի մը, օտարազգի սուլթանի մը լուծին տակ կը գտնուին: Ո' և է օսմանեան քաղաքագէտ կարող չէ Պոլսոյ փատիշահութիւնը իր կրօնական հանգամանքէն մերկացնել առանց կայսրութեան գոյութիւնը անմիջապէս վտանգելու: Ու բազմաթիւ են ներքին այն պահանջումները որոնք օսմանեան կայսրութիւն մը միշտ կրօնական կապերով կաշկանդուած պիտի պահեն:

Թիւրքիոյ ազատական իսլամներուն ի նպաստ մենք այս իրականութիւնը ճանչնալու յօժարակամ գտնուելով, բնականաբար կը փափաքինք որ անոնք ալ առանց ո' և է նախապաշարումի կարողանան հասկնալ մեզի նպաստաւոր իրականութիւնը: Այդ իրականութիւնը այն է որ մենք հայերս այսօր հանդէպ օսմանեան իշխանութեան այլ ևս այն ստրկացման պայմաններուն մէջ չենք ուր իսլամը մեզի կը բանտէր իր ահեղ ուժին զօրութեամբը: Մեր ջանքախումբին համար ի գործ դրուած ամէն միջոցներուն հակառակ մենք կրցինք մեզի համար ստեղծել բարոյական, մտաւորական, նիւթական ուժ մը որուն կռթնած կարող ենք այսօր պահանջել այնպիսի իրաւունքներ զոր զար մը առաջ մտաբերել ներելի չէր:

Օսմանցիները տիրելով Հայաստանի մեզի դեմ գործադրեցին այն բոլոր բարբարոսական խստութիւնները զոր ամէն աշխարհակալող ցեղերը իրենց տիրապետած երկիրներուն մէջ սկիզբէն ի վեր գործադրած են, կը գործադրեն ու պիտի գործադրեն: Հայոց նկատմամբ օսմանցիներուն վարմունքը տիեզերական պատմութեան մէջ բացառութիւն մը չէ: Առանց հին դարերը պրպտելու, առանց շատ հեռունքը դեղերելու, ահա այսօր մեր թուրք կը տեսնենք Ռուսիան որ Հայը, Բուլղարացին, Չէքքէզը, Վրացին, Ֆինլանտացին ամէնքն ալ իբր ուրոյն ցեղ անհետացնելու և անոնց սեփական հայրենիքները ընդհանուր ոռուսացման մէջ հալեցնելու կը հետամտի: Իսլամ թիւրքերն ալ մեզի նկատմամբ միևնոյն նշատակը առաջադրած են. անցեալին մէջ բաւական յաջողած են, բայց հիմա ըմբռնելու են թէ այլ եւս կարող չեն հայ ցեղը փճացնելու քաղաքականութիւնը անպատուհաս շարունակել:

Աշխարհակալութեանց մէջ ուժն է որ իրաւունքը կը ստեղծէ. թիւրք ցեղը երբ հետզհետէ կը տկարանար բռնականաբար սահմանուած էր նաև հետզհետէ իր իրաւունքները կորսնցնելու այն ազգերուն վրայ որոնց տիրած էր բուն գորութեամբ: Օսմանեան իշխանութիւնը այս ճշմարտութիւնը եթէ ըմբռնած ըլլար, ինքն իր ձեռքովը աստիճանաբար քրիստոնէից պիտի վերադարձնէր անոնցմէ կորզած իրաւունքները. ու իբր անկախ պետութիւն ապրելու և զիմելու միակ հնարաւորութիւնը պիտի փնտռէր կայսրութեան նախկին անկախ ազգերուն իրաւունքները մասամբ վերադարձնելով, անոնց հետ դաշնակցութեամբ ապրելու մէջ: Բայց Երբեք թիւրքերը իրական կացութիւն մը ըմբռնելու չափ իմաստասէր միտք չունեցան, ուստի եւ քրիստոնեայ նահանգներն ալ մէկիկ մէկիկ անշատուելով կայսրութենէն կամ ինքնավարութեամբ կ'օժտուին կամ ուրիշ հզօրագոյն պետութեանց լուծին տակ կը մտնեն: Երիտասարդ թիւրքերը որոնք, գոնէ տեսականին մէջ, իրենց պետութեան փրկութիւնը և վերականգնումը ծրագրած են, արդեօք պիտի կարենան այս էական ճշմարտութիւնը ըմբռնել և ըստ այնմ յորինել յայտադիր մը որ երկրին քրիստոնէից ալ հաւանութեանը արժանանալով նաև Եւրոպայի օժանդակութիւնը յուսադրէ Երիտասարդ թիւրքերուն:

Երիտասարդ թիւրքերը Եւրոպայէն տակաւին ո՛ր և է լուրջ համակրանքի յայտարար ապացոյց մը չունեցան: Իրենց նոր պետը որ գուցէ առ ժամայ պետ մըն է, իսլամական և թրքական տեսակէտներով կրնայ զօրութիւն մը համարուիլ Երիտասարդ թիւրքերու կուսակցութեան, բայց Եւրոպայի առջև անոնց դատին համար տկարութիւն մըն է քան թէ ուժ մը: Սուլթանին քեռայրը իր անցեալովը իրաւունք չունի մեծ համակրանք վայելել քրիստոնեայ աշխարհէն: Իրեն հարցում մը կ'ուզուի. երբ անգլէն անպաշտպան հայ քրիստոնեաները կը կոտորուէին Հա-

յատտան ու Պոլիս, այն պահուն Բնչպէս շտաբերեցիր թէ մարդկութեան ու քաղաքակրթութեան դէմ ոճիր մը կը գործուի:

Մահմուտ փաշա նաև Եւրոպայի երեսին կուտայ իր անտարբերութիւնը հանդէպ թիւրքիոյ արդի վատթար վարչութեան, որ օսմանեան կայսրութիւնը արագաքայլ իր կործանումին կը մղէ. և սակայն կը մոռնայ թէ անցեալին մէջ եւրոպական պետութիւնները՝ յատկապէս Անգլիա և Ֆրանսա, թիւրքիոյ շռայլեցին իրենց բարեացակամութեան ապացոյցները: Օսմանեան իշխանութիւնը որքան զրամ փոխ ուզեց տրուեցաւ իրեն. թիւրքիոյ ելեւմուտքը բարեկարգելու, թիւրքիոյ նաւատորմը և բանակը հզօրացնելու համար ինչ աշակցութիւն որ պէտք էր չննայուեցաւ: Ու այդ ատեն օսմանեան իշխանութեան վարիչներն ալ Բէշտ, Ֆուատ, Ալի փաշաներուն նման անձնաւորութիւններ էին: Ի՞նչ եղաւ այդ բարեկամութեան արդիւնքը: Ջարդ Նեստորականներու, ջարդ Լիբանանի, ջարդ Պուլկարիոյ, անխնայ հարստահարութիւն Եւրոպայի և Ասիոյ քրիստոնէից դէմ, ելմտական սնանկութիւն, քայքայում:

Երիտասարդ թիւրքերը եթէ ասկէ վերջ մտադիր են լուրջ բան մը ընել Եւրոպայի մէջ, թո՛ղ միայն ներկայովը չգբաղին, թո՛ղ ուսումնասիրեն այս անցեալն ալ: Մենք հայերս սպասողական դիրքով զիրենք կը դիտենք:

ՀԱՅՈՒՆ ՈՒՂԵՂԸ

ՀԱՅՈՒՆ ՅՈՒՏԵՏՍՈՒԹԻՒՆԸ

Գ.

Հայուն յոռետեսութիւնը չունի գերմանական վարպետներուն երազած մէթօտը. մեր կրթութիւնը աւելի ֆրանսական քաղաքակրթութենէն օրինակուած է. մեր ուղեղը՝ իր բարոյական ընդունակութեան մէջ՝ կը հեռանայ գերմանացի ուղեղէն, մօտենալու համար Ֆրանսականին: Այս բացատրելի է որ ֆրանսացիները կանուխէն Արևելքի մէջ մտցուցած են իրենց քաղաքակրթութիւնը, ուղեղներուն տալով իրենց խորհելու ու գործելու եղանակները: Մեր գրականութիւնը ֆրանսականին ընթերցանութեամբ պարարտացած է. մեր փիլիսոփայութիւնն ալ, մեր յոռետեսութիւնն ալ ուրեմն պիտի կրէին ֆրանսականին ծալքերը:

Չունիմ ձեռքիս տակ վերջի տարիներու մէջ հայ գրականութեան ամբողջ, նոյն իսկ կիս կատար հաւաքածան, օրինակներով հասկցնելու համար թէ մեր յո-

սետես գրողները եթէ չեն մօտենար Գերմանացի յոռե-
տեսներուն, անոնց չափ փեսասկար են, ըստ իս:

Ամենէն շատ աղմուկ հանող ու ինքզինքը յոռետես
հոշակող գրագէտը Եղիա Տէմիրճիպաշեան եղած է: Քը-
սան տարիի չափ Պոլսոյ հրապարակը լեցուցած է իր
անհասկնալի գրականութեամբը, ուր անհեթեթութիւնները,
միջակութիւնները, ցաւագարութիւնները ու գլխաւորաբար
վտանգաւոր իմաստասիրութիւնը սեղմեցուցած է առանց
ձեկին, ոճին, գաղափարին կարևորութիւն տալու:

«Տէմիրճիպաշեանի իմաստասիրութիւնը, որուն ջիղը՝
մութին հրայրը, մահուան սէրը, մահուան կիրքն է, գե-
րազանց անբարոյական իմաստասիրութեան բարոյական
արժէքը կրնանք չափել հակամիտութեան համեմատ՝
զոր նա կր տածէ վէպի կեանքին, բնական, բնօրինա-
ւոր, ներգաշնակաւոր շղթայաշարութիւնը:» Տէմիրճի-
պաշեան անկշիռ ուղեղ, ըրած է մէկ քանի անգամ անձ-
նասպանութեան փորձեր, Նիրվանային ծոցը երթալու
թաղուելու համար վերջապէս:

Նիրվանան եղած է իրեն համար անէացումի մէկ հա-
տիկ միջոցը, որով մարդ կեանքի պատրանքներէն խու-
սափելով կ'իյնայ մահուան ծոցը: Պուտտայականութիւնն
է աս, որու մէկ հատիկ ու ապիկար ներկայացուցիչը ե-
ղած է Տէմիրճիպաշեան:

«Այսպիսի հեղինակութիւններէ յետոյ, կը գրէ Դրա-
կան եւ իմաստասիրական շարժումին, միթէ ներքի չէ՞
յոռետեսութեան վայրկեաններ ունենալ ինձ ալ, — եւ
Լայպնիցն ուրանալ: Եւ երբ մթազին ամպ մը կ'անցնի
հսգոյց վրայէն, երբ արինալիր եղելութիւն մը կը
ձնչէ միտքը ու կը ճմլէ սիրտը, երբ՝ Սաղմոսերգունին բա-
ցատրութեան համեմատ՝ տրտում է ցմազ անձը, պար-
տաւոր է գրիչը զքեզ ներկայացնել իբրև ջերմեռանդ
հաւատացեալ յառաջիմութեան, զքեզ ներկայացնել բերկ-
րապատար յար: Այդ մահացու ժամերուն, երբ ինձ դի-
պի մատենագրել, անէ՞ծք կը ժայթքէ գրիչս:»

Չարչարուած հոգի մը իբր. հիւանդ ուղեղ մը որ
«Գաղափարներու իմաստասիրական ճշմարտութիւններուն
հետ» կը խաղայ:

Հունկ անուն տղայ մը անձնասպան կ'ըլլայ: Անմի-
շապէս Տէմիրճիպաշեան երկու ոտանաւոր կը նուիրէ
Հունկի: «Երիտասարդ ու զժբաղդ գրաշարին որ սև յուսա-
հատութեան վայրկեանի մը մէջ անձնասպան եղաւ,
իբ գլուխը, իբ շուարած գլուխը շախմատի տալով սրըն-
թաց կառախումբի մը տնիւններուն տակ:»

Անհուն ձերի մը զոյգ մազ՝
Խոկմանց շոգում ձերմըկցած,
Ալեւոյթին պէս անշարժ
Երևոյթին պէս խուսող,
Կորածըզի աչքիս տակ
Որպէս հարցում մը Սփինքսին
Ո՛ւ երկաթեայ պատասխան...»

Թըրի հարցնել ինձ «Է՞ր կեաս,
— Չայլա—Հարօլտի գան հարցումն —
Կեանքն եթէ բեռմէ քո յուս:»
Թըրի հարցնել ինձ. «Հունկէն
Միթէ նըւա՞գ ես անյոյս.
Եւ դու, գրող անուանի,
Գրաշարէն նըւա՞գ քաջ:»
Անխուսելի այս հարցումն
Ուղղէ խուսող ինձ ուղին
Քու մահուանէդ ի վեր Հո՛ւնկ:

«Մասիս 1893»

Բարբաղդաբար Տէմիրճիպաշեան ա՛լ չի կարգացուիր.
ու իր իմաստասիրական անիմաստութիւնները չեն կրնար
այլ ևս ազդեցութիւն ունենալ նոր սերունդին վրայ:

Մեր ամենէն սիրուած բանաստեղծը Մկրտիչ Պէշեկ-
թաշեան իր մելամաղձոտ, տխուր ու շատ փափուկ տա-
ղերով չկրնար յոռետես մը նկատուիլ: Իր երիտասար-
դութեան, կորովալից ու առոյգ, սիրած է կեանքը, ինչ-
պէս ինք ալ կը խոստովանի: Հիւանդութեանը ժամանակ
միայն, երբ հազը ս. ստիկ կը տանջեր զինքը, սիրտը
ցաւերով կը լեցուի, զգալով թէ մահը մօտ է:

«Իմ առողջութեանս վիճակը միևնոյնն է, կրնամ ը-
սել աւելի վատթար... կը գրէր իր կեանքին վերջի ա-
միսներուն մէջ: Կը սիրէի ատեն մը կեանքը եւ իրաւունք
ունէի սիրելու. բայց հիմա որ անհուն զգացումներս՝ ան-
հուն պատրանքներ դարձեր են, կեանքը ինձի համար
ոչ հրապոյր եւ ոչ արժէք մը ունի. ուստի անոր կորուստն
ա՛լ կամ կորստեան երկիւղը չի կրնար այլ եւս երևակայու-
թիւնս վրդովել:»

Անկարելի է յոռետես անուանել այս տողերը:
Գուրեան ճշմարիտ բանաստեղծը, Չախմատուած խեղ-
ճութեան ու հիւանդութեան տակ, ունեցած է զառնութեան
յուսահատ վայրկեաններ: Աղքատ ծնած, աղքատ ապ-
րած, աղքատ մեռած գրեթէ պատանի, առանց կեանքը
ճանչնալու, առանց զայն զգացած ըլլալու, սիրած ու ա-
տած է զայն, ու պոռթկացած իր անհուն ցաւը, հիւան-
դի ու կարօտի կսկծելի ցաւը, կեանքը իրմէ խլողին
վէմ:

Իր բանաստեղծի կազմութիւնը երգել տուած է սէրը
իր ճերմակ ամբօնութեանը մէջ. ու թոքախտաւորի ցաւը ա-
նիծել տուած է երկինքը:

Է՛, մընաք բարով, Աստուած եւ արև
Որ կը պըպըլաք իմ հոգւոյս վերեւ...
Ասող մ'ալ ես կերթամ յաւելուլ երկնից,
Ասաղերն ի՛նչ են որ եթէ ոչ անբիժ,
Եւ թըշուառ ոզուց անէ՞ծք ողբագին,
Որք թըռին այրել ճակատն երկնքին,
.
Իսկ եթէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ,

Հոս մասսախուզի մէջ համր անշշունչ,
Այժմէն թող շանթ մ'ըլլամ գալկահար,
Պըլլուիմ անուանդ, մոնչեմ անգադար,
Թո՛ղ անէծք մ'ըլլամ ու կողըդ խըրիմ,
Թող յորջորջեմ քեզ. «Աստուած սխերիմ»:

Կը վերջացնէ.

Աստուծոյ ծաղրն է աշխարհ ալ արդէն:

Ոհ երբեք չպիտի համարձակիմ յոռետես ըսել Դուրեանի համար. պատանի, ապրելու սէրը ունէր, ու իր ցաւը, իր անէծքը կեանքին դէմ չէր, ընդհակառակը, իր ցաւը անհուն է որովհետեւ կը զգայ թէ մահացու կերպով խոցուած է: «Երբեք մի մտաբերեր, կը զրէր ճանֆէս, ճեանի, որ ես յուսահատ եմ, բնա՛ւ. բանաստեղծ մը մահուընէ չսոսկար: Այն ատեն իրաւունք ունէի ցաւելու, երբ ամէնքը անմահ ըլլային ու ես միայն մահկանացու:» Ու հակառակ սա տողերուն՝

Խորշ մը կար որ զիս չէր ծաղրեր

Այն լուռ փոսն էր գերեզմանիս:

Դուրեան կեանքը չսաւեր:

Տխուր բանաստեղծ մը եղած է Դուրեան, ու իր վայրկենական արցունքները բացատրելի: Անկարելի է յոռետես յորջորջել այն բանաստեղծը, որ այս տողերը կը գրէր՝

Ո՛հ, տըւէք հսգոյս կրակի մի կաթիլ,

Սիրել կ'ուզեմ գեռ, եւ ապրիլ ու ապրիլ:

* * *

Վերջի տարիներս Պոլսոյ գրականութիւնը, տխուր անկումի մը մէջ, յոռետես գրագէտ մը ունեցաւ. Յ. Մ. որուն իմաստասիրական հոծ գաղափարները, քիչ մը մութ, շատ կը մօտենան զասական յոռետեսութեան: Չունիմ իր աշխատութիւնները. 1895ի թերթերէն մէկուն մէջ կը գտնեմ, իր ստորագրութեամբ «Տխուր դրուագ մը, սեւ պատը կամ մահը» վերնագրով յօդուած մը: Նմոյշ մըն է ատիկայ իր հոգեկան վիճակին, իր յոռետես ձգտումներուն:

Այն հարցումին թէ ի՞նչ է մահը, այսպէս կը պատասխանէ՝ մահը.

«Եւ՛ ամէն այրի քէն, ամէն սկիզբի կատարածն, ամէն խինդի սպառուածն ու ամէն կեանքի փոսն եմ: Ես եմ որ կ'իմաստնացունեմ ու կը յիմարացունեմ:

«Յաւերժ իմաստութեան մէկ տխուր երեսն եմ ես:

«Տժգոյն եւ անիրևոյթ զին մըն եմ ես ամէն երեւելի կեանքի:

«Ե՛ս արգասաւոր եղծուեմ եմ ստեղծումին, իմաստուն փորձն եմ ես անիմաստագործին, ես հունն եմ անհունին:

Ամէն արշալոյսի վերջալոյսն, ամէն տիւի գիշերն, ամէն ձայնի լուսութիւնն եմ... Մեծ վրիպակին սև պտուղը. անոր յաւերժ յուշարարը:...

«Լրումը մեծ գործին, վսեմ համայնիկն (որ աղառը

ռանայն մը չէ՛, վասն զի իսկ ռանայն) որուն տրամաբանական վերջին եզրն եմ:

«Այսպէս է ալ ու այսպէս պիտի ըլլայ միշտ:

«Ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ:»

Յ. Մ. յոռետես մըն է, ան որ կը դաւանի թէ մահը «իմաստուն փորձն է անմաստ գործին» «մեծ վրիպակին սեւ պտուղը». կեանքը ուրեմն իրեն համար անիմաստ գործն է, մեծ սխալը, ունայնը, աղուր կամ տգեղ, բայց ունայնը. ու մահը միայն կեանքին իմաստութիւնը, առեղծուածին լուծումը:

Շատ քիչ հասկցուած է Յ. Մ. մեր երիտասարդներէն. թէպէտ, իբրև գրագէտ՝ ինքնատիպ է ու իրարձակները ունին տիրութիւն մը զգայութեանց զոր քիչերդրած են անկեղծօրէն իրենց գրութեանց մէջ:

Եթէ բոլոր նոր գրողները ունենային Պէշիկթաշիւանի, Դուրեանի շնորհալի ու թափանցիկ բանաստեղծութիւնը, կամ Մ.ի փափ ուկ իմաստասիրութիւնը, չպիտի բողոքէի. բայց, ինչպէս ըսի, ջարդերէն յետոյ գրագէտները ու բանաստեղծները բերին անանկ յոռետես ու զլխաւորաբար հիւանդ գրականութիւն մը զոր անկարելի է կարգալուսանց գայթակղելու:

Այս նոր գրականութիւնը զոր արտասահմանի թերթերուն մէջ կը տեսնեմ, կը տխրեցնէ զիս: Ճշմարիտ յոռետեսութիւնը չէ, այլ շատ հիւանդ գրականութիւն մը, որ յոռետեսութեան կը մօտենայ:

Գրող մը իր սուգի ու ցաւի վայրկեանները ունի, որովհետեւ կեանքը, բնութեան պատկերը՝ ունի փոթորկալից ու հանդարտ օրեր. հոգիին բոլոր մեղամաղձոտ արտադրութիւնները սակայն իրենց արուեստական գեղեցկութեան նկատուածով՝ նետելու չէ ընթերցողին անյաջ երևակայութեան առջև: Կը հասկնամ թէ արտասահմանի թերթերէն շատեր լեցնելու համար իրենց լայն սիւնակները, չեն խորհիր ազգային օգուտը, կը հրատարակեն իրենց ձեռքը ինկած առաջին յօդուածը, բաւ է որ անիւհայ ունենայ նորութիւն մը, կամ հեռուէն հեռու գեղեցկութիւն մը, զոր թափանցելու համար շատ լուս տրամադրուած ըլլալու է մարդ:

Օրինակներ չեն պակսիր, բայց չվիրաւորելու համար հեղինակները, չպիտի տամ իրենց անունները: Խւրաքանչիւրին արձակէն կամ ոտանաւորէն պատահներ Հոս դընելով զիրենց վիրաւորելու և կամ հիւանդ նկատելու գաղափարը ինձմէ դուրս է: Փափաքս ընդհանուրին ցոյց տալ է այդ հիւանդ գրականութիւնը, զգուշացնել ամբողջ ու խնդրել գրողներէն որ գիտնան ոչ թէ սանձել իրենց զգացումները, այլ իրենց յղացումներուն տխուր հակումը:

Չիրենց ամէնէն շատ հետաքրքրող նիւթերը եղած են անձնասպանութիւնը, մահը, բանդագուշանքները. «Պէտք չունէր յոգնութեան, քիչ ատենէն ատկէ ալ ձանձրացաւ. անբացատրելի մաղձոտութիւն մը լեցուց հոգին, և մահուան գաղափարը անհուն անուշութեամբ կը ներկայանար մտքին:»

Աւելի սոսկալի տողեր ալ գտայ նոյն հեղինակին յօգուածին մէջ, որ երեցաւ շարդերէն շատ քիչ յետոյ:

«Երբ նշանածին հետ կը խօսէր, իրեն այնպէս կը թուէր թէ յանկարծ աղջիկը կ'մտնէր դարձած իրեն կը նայէր. ձեռքէն բռնեց՝ շոր ոսկորներու ազդեցութիւն մը կ'ընէր, և սոսկալի փափաք մը զինքը կը լափէր այդ նազելի արարածին մահը տեսնելու:

«Մեռնէ՛ր ան իր գրկին մէջ և վերջին շունչը իր բերնին վրայ միզէր, և աչքովը տեսնէ՛ր, և սիրականին օրհասը զննէր, անոր շարչարանքը,»

Չեմ շարունակեր: Այս հեղինակը գրած էր սակայն շատ սիրուն նորավէպեր:

Անծանօթ մը, նոր մը անտարակոյս, կը գրէր

Ու կը խորհիմ թէ կեանքը ամբողջ

Սպասուածն է մեծ սարսուտին

Որ կը ցնցէ խեղճ մարդը ողջ,

Թաւալելով զանի լոխ

Սեւ անդունդը Անէութեան

Մէջ սկըտող սպասումին:

Անփնաս է սկսնակի մը համար, բայց տեսնելով թէ այլանդակ երազները մեծ ընդունելութիւն կը գտնեն թերթերէն, խրատուուած, ինք ալ պիտի փորձէ արտագին գրականութիւնը:

Մահը երգողներուն թիւը փոքր է բանդագուշանքները գրականութեան բարձրութեան հասցնողներուն քով:

«Այն ատեն տեսայ որ սրտեր կը նետէին անոր մէջը»

կ'ըսէ յոյժ ջղային գրող մը, որ սակայն երազի մը պատմութիւնը կ'ընէ:

«Կը նետէին, կը նետէին տարօրինակ արագութեամբ, այդ սեւցած ու ծակծկուած մտի կտորները, կը նետէին շատերը խանձուած ու շատերէն գրեթէ ոչինչ մտալով. և քանի կը նետէին, այնքան սև հոգիները կը շատնային մեծ սուգին մէջ, և հծծիւնը ա՛լ կը թնգար, կը տխրէր ամէն կողմէն արտաշնչուող լացերուն, ծիծաղներուն, երգերուն:»

Ուրիշ մը, անհասկնալի լեզուով մը, զէթ ինծի համար, ու տարօրինակ կերպով նոր ձեւով ոտանաւորի մը մէջ կը գրէ առանց սարսուտի, մարդու մը պէս որ կ'տպրի զառանցանքներու մէջ:

Օ՛, բոլոր այն ոսկորի ու բացուած թեւերու
Ընդհանրութիւնները կ'մարսական
Որ իրենց գիշատողի զահանգող մարմիններէն
Երանորէն կ'արձագանգուէր,
Քարերուն տակ ահարկու.
Ու արի՛ւնը որ կը հոսեր հրաշէկ,
Գէպի հանդարտ հոգեվարքները անհուն,
Աչուրներու ահաբեկ:

Այս ամէնը կ'ըլլան, «բեռնոտ ու երկաթէ մարմիններով» գիշերուան թռչուններու» զալուստովը: Հիւանդէ աւելի բան մը ունին այս առեղծուածային բանդագուշանքները, կուզէի անոր հեղինակը մօտէն զննել, ու

հասկնալ անոր ուղեղին զարմանալի կազմութիւնը որ ծնունդ կուտայ աներեւակայելի պատկերներու:

Պիտի վերջացնեմ յիշելով աղուոր, բայց շատ հիւանդ սա տողերը, որուն հեղինակը սակայն մինչեւ այսօր անողջ գրող մը նկատած էի:

« — Ամբողջ կ'եռնես փախուստ մը եղած է: Վախ մը, անբացատրելի ու անողորջ վախ մը սպառնալիքի պէս ծանրացած միշտ գլխուս վրայ, ու հեւալով, յուզումէ հեւալով կը փախչիմ, կը փախչի՛մ, կը փախչիմ խենդի մը պէս: Անըմբռնելի բան մըն է ասիկա, ու չեմ կրցած ազատագրուիլ անկէ, որովհետեւ վախնալիս կը վախնամ: Երբեք խաղաղութեան ամբողջական օր մը չեմ ունեցած: Մոռացումի հազուադէպ երջանիկ ժամերուս մէջ յանկարծ ինզիսքիս եկած ու յանցաւորի մը պէս կանգ առած եմ իմ գինովցնող յափշտակութիւններուս մէջ:»

Մեղամաղձոտ մը պիտի ըսէի ես ասոր. որուն հոգին ուղեղին այլասերումէն տկարացած, չի կրնար հեռացնել օպսեսիօնը, զոր այնքան լաւ բացատրած է, այնքան ճիշտ որ հիւանդ ըլլալու է այդպէս զգացած ըլլալու համար:

Անձերը, հեղինակները չյիշեցի. իրենց գործերը, իրենց մտաւորական արտադրութիւնները կը բաւեն ինծի ապացուցանել թէ ամէնքն ալ ջղայիններ են, որոնք յագուրդ սուտած են իրենց անզուսպ վախերուն նկարագրութեան, սեւ երազներուն, տխուր յղացումներուն:

Գրագէտ մը, բանաստեղծ մը, իրաւունք ունի իր բոլոր էութիւնը, իր ցաւերը ու յոյսերը, ընդվզումները ու տենջանքները, ատելութիւնները ու հպարտութիւնները թուղթին յանձնելու: Բայց երբ այդ գրողը հայ է, այդ իրաւունքը չունի այլ ևս: Մեր ամէնուս պարտականութիւնը մեր ազգին կազուրիչ ապաքինումին աշխատին է. փոխանակ հիւանդ գրականութեամբ մը վալուան սերունդին հոգիին մէջ մտցնենք վախերու, մղցաւանջներու, մահուան արտաւոր քաղցրութիւնը, մեր այն սերունդին որ, տղայ, տեսաւ շարդերը, ու մենէ աւելի ջրղային է, փոխանակ այդ ցաւազար գրականութեան, կորովալից, առողջ գրականութիւն մը պէտք է տանք:

Առողջ գրականութիւնը պիտի սնուցանէ նոր սերունդը, ան է որ պիտի տայ կուսելու ուժը, զիմադրելու յանդգնութիւնը, ու վերջնական յաղթանակը անոնցը պիտի ըլլայ որոնք գիտցան իրենց կամքին զօրութեամբ, հոգիին առոյգ կորովով, ուզեցին առողջ տրամադրութիւններով տոկալ ազգերու այլասերումին:

Բարիգ ՏՐ. ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

ԾԱԳՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՒՆ

Դ.

Երեք յօդուածով պարզեցի 1870ին կազմուած Հայաստանի հարստահարութեանց քննիչ յանձնաժողովին տեղեկագիրը, որուն մէջ միանգամայն մատնանիշ եղած էին այն միջոցները որոնց շնորհիւ հնարաւոր պիտի ըլլար բարուրել Հայաստանի հայ ժողովրդին վիճակը: Պատրիարքարանը 1870էն 72ին քանիցս Դրան ուշադրութիւնը հրաւիրած էր այդ տեղեկագրին վրայ, ու երբ 1876 թուականը կը հասնի, Հայոց տակաւին ո՛ր և է գուհացում չէ տրուած: Այդ միջոցին Առեւելեան խնդիրը ըստ պատճառից բացուած էր: Պոսնիա, Հերզէկովին, Պուլկարիա բռնկած էին, Եւրոպա կը յուզուէր մեծ ճգնաժամի մը տագնապէն: Եւ ահա այդ պահուն Հայոց Ազգային Ժողովը ինքն ալ վերստին ձեռք կ'առնէ Հայաստանի հարստահարութեանց խնդիրը:

Պատրիարքարանի վարչութիւնը փոխուած էր: Ներսէս եպիսկոպոս վարժապետեան, 1870ի Յանձնաժողովին ատենապետը, Պատրիարքական աթոռին վրայ կը գտնուէր, Խորհեան Հայրիկին տեղը: Նոր պատրիարքը Դրան հետ լաւ յարաբերութիւններ մշակելու քաղաքականութեան հետևող ըլն էր, իրեն մտերիմ խորհրդական ունենալով Օտեանը:

Մեծ պետութիւնները Կ. Պոլիս մասնաւոր պատուիրակներ ղրկելով, Դրան մօտ իրենց զեպպաններուն հետ պուլկարական խնդրին լուծմանը համար Համաժողով մը գումարելու խորհուրդը կունենային: Եւ ահա մեր Ազգային Ժողովը Հայաստանի հարստահարութեանց խնդիրը կը վերաբանայ: Եթէ ձեռքս ունեցած ֆրանսերէն տեղեկագրիս մէջ թուականներու սխալ չի կայ, Ազգային Ժողովը 1876 սեպտեմբեր 10 22ին ընտրեր է հարստահարութեան քննիչ Յանձնաժողով մը որ մէկ շաբթուան մէջ, այսինքն՝ սեպտեմբեր 17 29ին արդէն իր տեղեկագիրը Ազգային Ժողովին ներկայացուցած է:

Այդ նորընտիր մարմինն մէջ հին Յանձնաժողովի անդամներէն միայն մէկ հատ մը կը գտնուի, Ստեփան Փափագեան, որ Տեղեկաբեր ընտրուած է: Միւս անդամներն են՝ Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոս, որ արդէն կամքի տէր և աշխատող եկեղեցականի մը համար կը վայելէր, ու Յանձնաժողովին ատենապետ կ'ընտրուի:

Սերոբեան կարապետ եպիսկոպոս, պատրիարքական նախկին փոխանորդ, խելօք ու աննշան մարդ մը, տէր Օհաննէս քահանայ Մկրեան, պատրիարքական փոխանորդը. Յարութիւն Մերեմզուլի, որ ատենադպիր կը նշանակուի. տըթ. ֆէլտիմարճեան, և Մանսի խմբագիր Խթիւնեան կարապետ: Բոլոր անդամները, բացի Իթիւնեանէ և Սերոբեան եպիսկոպոսէ, ամէնքն ալ կրակոտ երիտասարդներ էին:

Յանձնաժողովը ազգային երեսփոխանութեան ներկայացուցած Տեղեկագրին մէջ կը յայտարարէ թէ 1872 ապրիլ 11ին Սատրազամ Մահմուտ փաշային մատուցուեր է Հայաստանի հարստահարութեանց և անոնց դարմաններուն տեղեկագիրը, որ վաւերացուած է Հայոց Ազգային ժողովէն 1872 փետրուար 18ին: «Պատրիարքարանին արձանագրութիւնները ցոյց կուտան թէ, կ'ըսէ Յանձնաժողովը, այդ տեղեկագիրը փափաքուած արդիւնքը չէ ընծայած, թէ եւ Պատրիարքարանը այդ պատճառով Մահմուտ փաշայի յաջորդներուն ալ մատուցեր է եւ Ազգին ըղձանքները հաղորդած է:»

Այս նոր տեղեկագիրը ուրիշ բան մը չէ բայց եթէ նախորդին շարունակութիւնը, և կը պարունակէ, թուականի կարգաւ, կա՛մ բնագիրները ամբողջութեամբ, կա՛մ համառոտութիւնները այն բոլոր թագրիւններուն որ 1872 ապրիլէն յետոյ Դրան մատուցուեր են Պատրիարքարանէն, Հայաստան գործուած հարստահարութեանց համար: Յուցակէն զուրս կը մնան նահանգներէն ուղղակի իշխանութեան տրուած բողոքագրեր ու խնդրագրեր, որոնց գրեթէ ամէնքն ալ ո՛ր և է արդիւնք չեն ունեցած:

Ինչպէս նախորդին նոյն և այս տեղեկագրին մէջ ալ որոշ և յստակ գծերով երևան կուգայ իսլամ վարչութեան ոգին: Երկրին սատրազամը Մահմուտ Նէտիմ փաշային պէս Հին-Թիւրք մը ըլլայ թէ Միտհատ փաշայի նման Երիտասարդ Թիւրք մը, քրիստոնէից վիճակը երբեք փոփոխութեան չ'ենթարկուիր: Օսմանեան քաղաքականութեան առաջնորդող գաղափարն է՝ քրիստոնէին վրայ իսլամին գերիշխանութիւնը անխախտ և ամուր պահելու համար միշտ մահմետականին իրաւունք տալու ղէմ: Պատրիարքարանին բողոքի նիւթ հայթայթող խնդիրները աչքէ անցընելով, ամբողջապէս պիտի տեսնենք թրքական վարչութեան գերագոյն գաւանանքը:

* * *

Հալէպի հեռագրական ծառայութեան պատկանող հայ մը նոյն իսկ պաշտօնատանը մէջ կը սպաննուի: Կատալաութիւնը մարդասպանը կը պահանջէ, և իրեն կը յանձնուի Ահմէտ Չափուշ անուն մէկը: Տեղական իշխանութիւնը իբր ոճրագործ իրեն ձեռքս ունեցած մահմետականը առանց նախնական հարցաքննութեան մը իսկ ենթարկելու, շիտակ հիւանդանոց կը ղրկէ, իբր խելագար:

Պատրիարքարանը այս տարօրինակ որոշումին առթիւ Դըրան թաղերը մը կը գրէ 1872 ապրիլ 12 թուակիր. Դըրանէն ալ Հալէպ հրամանագիր մը կ'ուղղուի արգարութիւնը գործադրելու պատուէրով: Տակաւին 1876 սեպտեմբերին յայտնի չէր եղած Դրան հրամաններուն արդիւնքը:

Սակայն չն՞ք զգար թէ քրիստոնէի մը սպանութեան առթիւ մահմետական մը չպատժելու սկզբունքն է գործադրելու իշխանութիւնը գործադրած է: Պոլսոյ կեդրոնական վարչութիւնը արտաքին երևոյթները կը փրկէ օրինական ձեւակերպութեանց անթերի գործադրութեամբ, ապահով ըլլալով թէ անդին իսլամ կուսակալը ինքնին պիտի հպատակի դատական իշխանութեան հրամանէն վեր իսլամական դաւանանքի մը:

Քրիստոնեան սպանող մահմետականը անպատիժ պահելու անողորմ զրուցութեամբը թիւրքերոյ բոլոր քրիստոնեաները մահմետականներուն տրամադրութեանը ներքեւ են: Մերթ մէկիկ մէկիկ կը սպաննեն քրիստոնեաները, մերթ ալ խմբովին, առանց ժամանակի եւ միջոցի խտրութեան. 1860, 1876, 1894, Լիբանան, Պաթաք, Սասուն բնական շարունակութիւններն են իսլամին վարչական զրուցութեանը:

Սասունի քրիստ պէյերը կառավարութեան վճարուելիք տուրքերը Հայոցմէ գանձելով իրենց քով կը պահեն. տեղական իշխանութիւնը Քիւրտերուն վրայ զօրք կը հանէ և անոնցմէ ամբողջապէս իր պահանջը կը ստանայ: Բայց այդ զօրքին և անոր ձիւրուն ուտեստը խեղճ Հայ ժողովուրդը կը հայթայթէ, որքան ատեն որ անոնք Սասուն կը մնան: Ու ետքէն Քիւրտերը անգամ մը եւս կը պահանջեն Հայոցմէ ու կ'անեն միևնոյն տուրքը: Ալի-Րիզա փաշա մը քննութեան համար Սասուն կը զրկուի. իրողութիւնը կ'ստուգէ, բայց փոխանակ երկրորդ գանձումը Քիւրտերէն առնելով Հայոց յանձնելու, լաւագոյն կը համարի ապագային այսպիսի զեղծումներ չկրկնել տալու համար խորհուրդներ յղանալ: Կ'որոշէ Հազօ զօրանոց մը շինել, մշտամեաց պահապան զօրք դնել հոն, և Հազոյի միւտիւրն ալ Սասուն նստեցնել: Թուի թէ այս որոշումները ան ատենները Պատրիարքարանին համար գոհացուցիչ կը համարուին եղբր, վասն զի տեղեկագիրը կը գանգատի թէ այս անօրինութիւնները անգործադրելի մնացեր են: Ուրեմն Քիւրտերը Հայոցմէ տուրք առնելու իրենց ազատութեանը մէջ երբեք չեն նեղուած:

Պատրիարքարանը 1872 յունիս 17ին Դրան թաղերի մը կը գրէ ընդդէմ այն Քիւրտերուն որոնք կը հարստահարեն Մուշի Բոնաչէն, Խութ, Սասուն, Շատախ գեղերը. և ահա այս դիմումէն ոչ միայն ո՛ր և օգուտ չտեսնուիր այլ և նորանոր գանգատներու լուրերը կը հասնին, և Պատրիարքարանը կը պարտաւորուի ուղղակի Էրզրումի կառավարչին դիմել:

Ու այդ թուականէն քսան երկու տարի ետքը այդ գեղերէն է որ հայկական խնդիրը կ'արժարծի:

Մատենի պողոտաներուն շինութեան ատեն գործին վերակացուները տարապարհակ աշխատութեան կը պարտաւորեն ժողովուրդը, և բնաւ բան մը չեն վճարեր բանտերուն. Պատրիարքարանը 1872 օգոստոս 5 թուականով գանգատագիր մը կ'ուղղէ Դրան, որ խնդիրը ելեմտական նախարարութեան կը զրկէ:

Տիարպէքերի Սէվէրէկ բաղքին հայերը կը գանգատին թէ զինուորական տուրքին մէկ բաժնորդը զեղչելու որոշումը չգործադրուիր, ու թէ՛ մեծնողներուն եւ թէ՛ բացականներուն զինուորական տուրքն ալ կը պահանջուի: — Բան մը փոխուած է 1872էն 1900: — Նմանապէս կը գանգատին որ իրենց անշարժ կալուածներուն անոնց արժեքէն շատ աւելի բարձր գին զրուած է և ըստ այնմ ալ չափազանցօրէն տուրք կը պահանջուի: Նմանապէս տեղական իշխանութիւնը օրէնքին սահմանած ժամանակէն աւելի օրով աշխատացած է ժողովուրդը ճանապարհներուն շինութեան համար: Այս գանգատներուն առթիւ ալ 1872 օգոստոս 8ին թաղերի զրուած է Դուռը. խընդիրը ելեմտական նախարարութեան յանձնուեր է: Տակաւին 1876ին ո՛ր եւ է պատասխան չէր առնուած:

Բաբերդի Բումէլի գեղին մէջ պատահած առևանգութեան զէպք մը իր մանրամասնութիւններովը կրնայ մեր օրերուն կատարեալ նախատիպ պատկերը համարուի:

Սէֆէր անուն մահմետական մը 1872 մայիս 13ին կ'առևանգէ Սուքիաս անուն հայու մը տանը չորս տարեկան Մարթա աղջիկը: Իշխանութեան բողոք կը բարձուի. երկար փնտոտուցներէ ետեւ աղջիկը կը գտնեն, եւ հարկ կ'ըլլայ գանձիկ հարցաքննել գիտնալու համար թէ համոզմամբ է որ իսլամացած է, թէ ոչ ոպառնալիքի ու բռնութեան առջեւ տեղի տուած է. վասն զի մահմետականները կը պնդէին թէ աղջիկը քրիստոնէութիւնը ուրացեր է: Տեղին հայ և յոյն հասարակութեան երևելիներէն Մանուկ, Օհանէս, Փիլիպպոս և Բանայօթ Էֆէնտիները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ պաշտօնական հարցաքննութեան: Ու ահա մահմետական հօձանները եւ մուսուլմանները բազմութեամբ կառավարութեան պալատը կը մտնեն և կը սկսին պոռալ կանչել թէ աղջիկը արդէն իսլամութիւնը ընդունած ըլլալով, գանձիկ խոստովանցնելու պէտք չի կար, եւ եթէ ուզէր նորէն Քրիստոնէութեան գանալ, հարկ պիտի ըլլայ ըստ Շէրիի օրէնքին զինքը զլիստել: Դատաւորին օգնականը, Տուրմուշ Լֆէնտի մը, ամբօրին գոռում գոչումին կը մասնակցի և կը յայտարարէ թէ այս խնդիրը քաղաքային օրէնքով չկրնար լուծուիլ: Այս սպառնալիքները կը պոռան պղտիկ աղջկանը երեսն ի վեր, առանց մօրը թոյլատրելու որ անոր մօտե-

նայ: Աղջիկը խելակորոյս կը մնայ, եւ այս սպանացող ամբոխէն ահաբեկած, փրկութեան ուրիշ միջոց չտեսնելու բայց եթէ յայտարարել որ համոզմամբ իսլամացած է: Հայերը այս բռնաբարութեան դէմ բողոքելով կը պահանջեն աղջկանը ազատութիւն ձգել եւ ապահովութիւն տալ որպէս զի համարձակօրէն իր կամքը յայտնէ: Այս բողոքը լսելի չըլլար, և խեղճ Մարթան բռնի կ'ամուսնացնեն Սէֆէրին հետ: Սակայն հայ աղջիկը չկարենալով իսլամին հետ ապրիլ, ամէն վտանգ յանձն կ'առնէ եւ գեշերանց կը փախչի յորը տունը: Իշխանները եւ Հօձանները կուզեն իրենց վրէժը լուծել ըրիստոնեաներէն: Մունետիկ կանչել տալով բոլոր իսլամները Մետրեաէները կը ժողովեն և զանոնք ըրիստոնէից դէմ կը զրգոնեն, յայտարարելով թէ ասոնք իսլամացած աղջիկը յափշտակած էին: Երկու հազար մահմետական սուրբերով եւ բիրբերով զինուած, կը յարձակին Հայոց տուններուն և խանութներուն վրայ, կը թալլեն կը կողոպտեն, ինչ որ կը գտնեն կ'առնեն, երեսունի չափ հայ վիրաւորեալ կը ձգեն, ու ըրիստոնեայ ժողովրդին մէջ ահաբեկութիւն կը տարածեն:

Տեղական իշխանութիւնը վտանգաւոր կացութիւնը կը հեռագրէ Էրզրումի կուսակալին, որ հետը զօրք առած Բաբերդ կուգայ, քննութիւն մը կը բանայ որմէն կը հաստատուի թէ ֆրիստոնեաները մասնակից եղած չէին Մարթայի փախուստին, և թէ հայերը 2,000 ոսկիի կորուստ ունեցան, ու երեսուն հայ ալ վիրաւորուեցին: Քսանեփնը հոգի իբր յանցաւոր ձերբակալուելով կը զրկուին Էրզրում, ուր ոմանք երեք ամսուան, ուրիշներ վեց ամսուան բանտարկութեան կը դատապարտուին: Բայց Իշխանները եւ Հօձանները, ինչպէս եւ թիւրք մունետիկը որ իսլամները զրգոած եւ այս ծայրայեղութեան մղած էին, չեն պատժուած: Միանգամայն փաստի ո՛ր եւ է հատուցում չէ տրուել թալլուողներուն: «Այսպէս ահա, կ'ըսէ տեղեկագիրը, Բաբերդի ըրիստոնէից կեանքը, ինչքը եւ պատիւը վտանգուելու են, առանց ո՛ր եւ է պատիժ տալու յանցաւորներուն:» Հիմակ մեզի ո՛րքան միամտական կ'երեւայ այս զիտողութիւնը:

Ինչ որ է. Պատրիարքարանը 1872 յուլիս 27 թրւականով քաջրիք մը կը զրկէ Դուռը, պահանջելով Պատժական օրինագրքին տրամադրութեանց գործադրութիւնը, եւ թալլուած Հայոց փաստի հատուցում: Ամիս մը վերջը դարձեալ նմանօրինակ թաքրիք մը կը յանձնուի Դոան միեւնոյն գործին համար. երեք ամիս վերջը նորէն թաքրիք մը: Ու 1876 սեպտեմբերին Պատրիարքարանը տակաւին պատասխան մը չէ ստացած իր բողոքներուն:

* * *

Հայ ժողովուրդը իր բնիկ երկրին մէջ փնացնելու զըլխաւոր միջոցներէն մէկը եղած է որչափ հնար է ընդարձակ սահմաններով հող կորզել Հայոցմէ, և անիրաւաբար

զանոնք մահմետականներուն փոխանցել: Պատրիարքարանին բողոքները, որոնց մասին յետոյ պիտի խօսինք, ըմբռնելու համար քանի մը օրինակներով ցոյց տանք թիւրք իշխանութեան վարչական անփոփոխելի դրութիւնը հողային հարստահարութեանց մասին:

Միւթէհա հանրմ անունով իսլամ կին մը. Շէյխզատէ Մէհմէտ պէյի աղջիկը, Տիարպէքիքէն երկու ժամ հեռաւորութեամբ Սթթ գեղին բոլոր արտերը եւ ջուրերը իրեն կը սեփականացնէ իբր հայրենական ժառանգութիւն, եւ հայ մշակները կը պարտաւորէ այդ արտերը հերկել, ցանել, հնձել, ու արդիւնքին մեծ մասը իրեն տալ: Այս անիրաւութեան դէմ բողոք կը բարձուի. տեղական իշխանութիւնը միշտ իսլամ կնոջը իրաւունք կուտայ: Խեղճ հայերը կը բռնադատուին իբր ճարտ գատիլ: Պատրիարքարանը երկու տարուան մէջ երեք քաջրիք կը գրէ, բայց երբեք գործնական պատասխան մը չ'ստանար:

Մուշի Մօրնիկ գեղի հայերը անոր բոլորտիքը զըտնուող արտերը 40-50 տարի է ի վեր շարունակ մշակած ըլլալով, անանց վրայ սեփականութեան իրաւունք ստացած են, ըստ օրէնքի. ու ոչ ոք ո՛ր եւ է պահանջում ըրած էր: Քանի մը տարի առաջ Մուշի միաֆրիկէն, Հիւսէին էֆէնտի, մէջտեղ կ'ելլէ այդ հողերը իւրացնելու համար: Ժողովուրդը կը բողոքէ, միաֆրիկէն կը պնդէ, եւ վերջապէս կը յաջողի հողագործներէն հողերնին յափշտակել: Էրզրումի կուսակալը Իսմայիլ փաշա ժողովրդին կացութիւնը անձամբ քննելու համար Մուշի կողմերը պտոյտի ելած ատեն, այս խնդրով ալ կը շահագրգռուի, եւ զայն լրջօրէն քննել յետոյ միաֆրիկէն պահանջումները անհիմն կը գտնէ, եւ կը հաստատէ թէ այդ արտերուն տիրուածութեանը գեղին բնակիչներն են. հետեւաբար գեղին Հայոց անուանը արձանագրել կուտայ այդ հողերը: Փաշան, ըստ սովորութեան կալուածական առժամեայ իւրաքապէսներ կուտայ մինչեւ որ կ. Պոլսոյ Տէֆթերհանէէն վերջնական քափոռ-սեկեռիները հասնին: Իսմայիլ փաշա Մուշ ուրիշ բարեկարգութիւններ ալ կը գործադրէ, և կ'աքսորէ շատերը այն քիւրտ պէյերէն որոնք երկար ատենէ ի վեր ժողովուրդը կը հարստահարէին: Ու երբ Էրզրում կը վերադառնայ, քիչ ետքը պաշտօնանկ կ'ըլլայ:

Միւթթի կուսակալին փոփոխութենէն օգտուելով իր պահանջումները նորէն մէջտեղ կը հանէ: Մօրնիկէն երկու հայ կը բերէ, և խոստումներով ու սպանալիքներով անոնց ի դիմաց գեղին յայտարարել կուտայ տեղական Միաֆրիկէն անունով թէ, գեղին բոլոր հողերը և արտերը Միաֆրիկէն են ու գեղացիները լոկ վարձակալներ: Միաֆրիկէն այս երկու վկաներուն յայտարարութեամբը Մուշի Միաֆրիկէն այն հողերուն միակ սեփականատէրը կը հռչակէ: Ունակ կը ջնջէ Իսմայիլ փաշայի կատարած քննութիւնը, իբր սխալ եղած, և կ'ոչնչացնէ տրուած վճիռն ալ:

Գեղացիները այս որոշումին դեմ կը բողոքեն, և իրաւամբ կը պնդեն թէ երկու վկաները օրինապէս ամբողջ գեղին ներկայացուցիչները չըլլալով, իրաւունք չունենին անոր կողմէն խօսիլ, և թէ այդ հողերուն օրինաւոր տէրը իրենք էին, վասն զի բազմաթիւ տարիներէ հետէ զանոնք մշակած էին ու ոչ ոք պահանջում մը ըրած էր. ու իրենք Հիւսէին էֆէնտիին ճորտերը երբեք եղած չէին եւ չէին ալ կրնար ըլլալ, ինչպէս որ իսմայիլ փաշան ալ քննութեամբ հաստատած էր իրենց իրաւունքը: Սակայն տեղական իշխանութիւնը չուզէր այս յայտարարութիւնները մտիկ ընել, վասն զի Միշֆրին ազդեցիկ մարդ է, ու գեղացիները աղքատ և անպաշտպան: Ասոնք երկու ներկայացուցիչ կը դրկեն Պոլիս իրենց գործը Պատրիարքարանին յանձնելու համար: Եկողները հետեւին բերած էին 29 առժամեայ կալուածատիրական իշխանապէս, գեղացիներուն բողոքը եւ ուրիշ թուղթեր: Գործը կը յանձնուի Պետական Խորհրդին, որ ի նպաստ Հիւսէին էֆէնտիի վճիռ կուտայ. երկու հայ ներկայացուցիչները յուսահատ տեղերնին կը գառնան: Պատրիարքարանը այս գործը նորէն ձեռք կ'առնէ հողային ընդհանուր խնդիրներու շարքին մէջ:

Այս գործին առթիւ տրուած տեղեկութիւններէն կը տեսնուի թէ ատենին Էրզրումի կուսակալ իսմայիլ փաշան այն բացառիկ թիւրք պաշտօնեաներէն եղած է, որոնք բարեկարգութեանց մէջ կը փնտռեն կայսրութեան ապահովութիւնը, եւ ահա այս պատճառաւ ալ պաշտօնանկ կ'ըլլայ, վասն զի բարեկարգութենէն ջրհատոնեան ալ կ'օգտուի: Եւ տեսնուի թէ այդ քաղաքականութեամբն է որ 1895-96ին Մուշի կառավարիչը պաշտօնէն զրկուեցաւ, քրիստոնէից շարքը արգիլած ըլլալուն համար. ինչպէս պատժուեցան նմանօրինակ հազուադիւր ուրիշ պաշտօնեաներ:

Իսհակ պէյ եւ բազմաթիւ իսլամ ազաններ Չարսանճախի գեղերուն տուները, խանութները, այգիները, պարտէզները իբր իրենց աւանդական սեփականութիւնը համարելով, այդ տեղուանքի հայերը կը բռնադատեն իրենց վարձք վճարել այն բոլոր անշարժ կալուածներուն համար: Ու ասկէ զատ, հարերն են որ պէտքէ գնեն սերմնացու հունարը, ցանեն արտերը, եւ ետքէն ալ պարտաւոր են հունձքը պէյին և ազաններուն հետ կիսել: Այս վէճերը տասնը հինգ տարի է ի վեր գոյութիւն ունենալուն Պատրիարքարանը Դրան բազմաթիւ թաքրիթներ զրած է, եւ հարկ եղած հրամաններն ալ բերած է. Չարսանճախի տեղական իշխանութիւնը միշտ պէյին եւ ազաններուն կողմը բռնելուն Դուռը վերջապէս Չարսանճախ յանձնաժողով մը կը դրկէ: Այս մարմինը տեղին վրայ մանրակրկիտ քննութիւն մը կատարելով իր տեղեկագիրը կը յանձնուի Պոլիս Պետական Խորհրդին, որ ամէն բան լրջօրէն քննելէ յետոյ, իր վճիռը Հայոց ի նպաստ կուտայ: Հետեւ

աբար ազաններուն կ'արգիլուի Հայոց գործերուն մէջ խանուիլ ո'ւ և է պատրուակաւ, ու միևնոյն ատեն կը հրամայուի անոնց Հայերուն յանձնել կալուածատիրական թուղթերը: Կայսերական իրատէ մը վաւերացնելով Պետական Խորհուրդին որոշումները, անոնց գործադրութիւնը կը յանձնուի Չարսանճախի տեղական իշխանութեան: Այս վերջինս օակայն բնաւ կարևորութիւն չի տար ո'չ Պետական Խորհրդին որոշումներուն, ո'չ կայսերական իրատէին, ո'չ Դրան հրամաններուն: Որոշում, իրատէ, հրաման ամէնքն ալ արդարութեան և օրէնքի սկզբունքներուն հակառակ կը գտնէ, կը մերժէ տրուած վճիռներուն գործադրութիւնը եւ վերաքննութիւն կը պահանջէ:

Եւ ահա Դուռը փոխանակ անհնազանդ պաշտօնեաները պատժելու, ընդհակառակը անոնց բոլոր պահանջումներուն առջեւ կը խոնարհի, եւ Չարսանճախէն ետ զարձուած տեղեկագիրը կը յանձնուի Պետական Խորհրդին « առ ի պարտաւատաշահ տնօրինութիւն: » Ու միևնոյն ատեն Չարսանճախէն ալ երկու աղա կ'ելլեն Պոլիս կուսան և իրենք ալ կը դիմեն Պետական Խորհրդին: Այս վերջինս այլ ևս առանց Հայոց փաստերը մտիկ ընել ու զելու, կը ջնջէ իր նախօրդ որոշումը, նկատողութեան իսկ չ'առնել կայսերական վաւերացումը, եւ Չարսանճախի իշխանութեան կը հրամայէ որ ինք նոր քննութիւն մը բանայ և անանկ վճիռ մը տայ որ կարելի ըլլայ վերաքննել: Պետական Խորհրդին այս նոր որոշումը, որ նախօրդ կը ջնջէ առանց օրինական քննութեան, աս ալ կը վաւերացուի կայսերական իրատէով, ու տեղական իշխանութեան եւ Պատրիարքարանին կը հաղորդուի: Չարսանճախի հայ ժողովրդին զանգառներուն վրայ Պատրիարքարանը 1872 օգոստոս 5ին Դրան կը դիմէ, կը բողոքէ կատարուած ապօրինի գործողութեանց դէմ, և կը պահանջէ Պետական Խորհրդին նախօրդ օրինական որոշման գործադրութիւնը: Այդ դիմումները կը կրկնուին մինչև 1876 յունուար, եւ նոյն տարուան սեպտեմբերին տակաւին ո'ւ եւ է քահանայիցի պատասխան մը չէր ստացուած:

Սըվազի Քանդալ գաւառակին Եար-Հիսարի Միւտիլը, Ապտիլ-Րահման աղա, Հայոց հողերուն վրայ կը բերէ կը զետեղէ Չերքէզները: Պատրիարքարանը այս յափշտակութեան դէմ կը բողոքէ: Քանդալ Յանձնաժողով մը կը դրկուի, և անոր կատարած օրինաւոր քննութեան արդիւնքը Պետական Խորհրդին կը մատուցուի: Երանճաժողովը Հայոց կալուածական իրաւունքները ճանչնալով կ'տաւարկէ Չերքէզները հեռացնել Եար-Հիսարի հողերէն: Սակայն Պետական Խորհուրդը չընդունիր այս առաջարկը, և կը վճռէ որ Չերքէզները այդ հողերը պէտք է իրենց սեփականութիւնը համարին: Այսպիսի անիրաւ վճիռ մը արգարացնելու համար Պետական Խորհուրդը կը պատրուակէ թէ « Հայոց մշակած հողերը աւելի տարածութիւն ունենալով քան ինչ որ գեղացիներ

րուն կայուածական թուղթերուն մէջ արձանագրուած է, ուստի և այդ հողերը Պետական սեփականութիւն կը համարուին, և ըստ այնմ ալ կրնան Չերքէզներուն տրուիլ: Այս պարագային մէջ Պետական Խորհուրդը չուզեր բնաւ նկատողութեան առնել այն իրողութիւնը թէ, Հայերը անյիշատակ ժամանակներէ ի վեր այդ հողերը մշակելով, սեփականութեան իրաւունքը կը վայելն հողային օրէնքներու տրամադրութեանցը համեմատ:

Այդ խնդիրներուն առթիւ Դուռը կ'ընդունի Յանձնաժողովին ուրիշ մէկ առաջարկը, և կ'որոշէ որ Քանդախի միւտիը Ապտիւլ-Քաճման փաշան պաշտօնանկ ըլլալ, ուստի և հրահանգները կը զրկէ Սըվազի կուսակալին, յանձնարարելով միանգամայն ուրիշ անձ մը այդ պաշտօնին համար: Բայց Սըվազի կուսակալը Հաճի Իզզէթ փաշա կը մերժէ եպարզօսական հրամանին գործադրութիւնը, պատրուակելով որ խառնակութիւններ կրնան ծագիլ: ու Քանդախի միւտիըթեմոն յանձնարարուած մարդը ուրիշ պաշտօնի կը յատկացնէ:

Ապտիւլ-Քաճմանի գործած հարստահարութեանց և վայրագութեանց զէմ նոյն իսկ իր տղան, Ահմէտ աղան, ալ բողոքած է Դրան և Պատրիարքարանին զարկած հեռագիրներովը: Պատրիարքարանը 1876 յուլիս 14ին դարձեալ կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ այս պաշտօնանկութեան խնդրին վրայ: Դուռը Սըվազի տեղական իշխանութեանց հեռագիր մը գարնելէ զատ ուրիշ բան մը չընէր:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՕՐԱԳՐՈՂԻ ՅԻՇՈՒՄՆԵՐ

Սուլթան Համիտի օրով Կ. Պոլսոյ մասնաւիտն ու կառավարութեան միջեւ յարաբերութեանց մանրամասնութիւնները անշուշտ հետաքրքրական պիտի ըլլան անոնց համար որ օր մը ուզեն մեր ժամանակակից պատմութիւնը գրել: Անձայն, անշուշտ էին մեր ամէն օրուան բախումները որոնք սակայն հիւանդի մը ներքին տագնապը մատնող բազկերակին լոկի բարբախումներուն կը նմանէին:

Պոլիս միօրինակ խստութեան ենթարկուած չեն հայ, յոյն, թիւրք թերթերը ու եւրոպական լեզուով հրատարակուողները: Եղանակին համեմատ այս կամ այն ցեղը աւելի կամ նուազ խստութեան կ'ենթարկուի իր թերթերուն միջոցաւ: Ինչ որ կը ներուի մէկուն, ոճիր է ուրիշին համար: Թիւրք օրագրութիւնը ամէնէն աւելի ծանրապէս շղթայուածն է. բայց մեծագումար ոտճիկները, առատաձեռն պարգեւները որոնք Երլազէն իր զիւտուն կը տեղան, կը թմրեցնեն ուղեզին ուժը, կը խզեն սրտին

պոթիկութիւնները: Եւրոպական լեզուներով հրատարակուող աշխարհաքաղաքացի թերթերը բարոյական նպատակ մը չունին, պարզապէս շահագիտական ձեռնարկներ են որոնց յաջողութեանը մեծապէս կը նպաստէ Երլազ իր շնորհաբաշխութիւններովը: Հայ եւ յօն թերթերը կասկածոտ կառավարութիւն մը միշտ գրգռուած կը պահէին վերջին քանի մը տարիներս. բայց Նեօլոյոս Աթէնք գաղթեց, և Հայրենիք ջնջուեցաւ. մնացողները քաղաքական ո' կէ ձգտում չունենալով կարող են խաղաղութեան վիճակի մէջ ապրիլ կառավարութեան հետ: Ո՛չ ոք կը փսսուէ իրենց. մարդկօրէն սխալուածի մը հազուադէպ պարագային ալ անմիջապէս ներողութեան կ'արժանանան:

Գրաքննութեան հաստատման առաջին փորձին թրականը ճիշտ չեմ յիշեր: Օր մը, կարծեմ աւելի քան քսան տարի է, խմբագրատունները հրաման հաղորդուեցաւ թերթերուն փորձերը Դուռը տանիլ և կառավարական վաւերացումէն յետոյ հրատարակել: Պոլսոյ ամբողջ օրագրութիւնը միաբանութեամբ դիմագրեց. մէկ օր մը բոլոր օրթերթերը իրենց սիւնակները մեծ մասամբ ճերմակ թողուցին. պետական սրոշումը անգործադրելի մնաց:

Կառավարութիւնը անկէ ետքը խորհեցաւ օրագրութիւնը անզգալի եղանակաւ գրաքննութեան հպատակեցնել: Տպագրական տեսուչը և իր օգնականներէն ոմանք սկսան առտունները խմբագրատունները երթալ և քաղաքավարօրէն խնդրել այս ինչ այն ինչ լուրին մեղմօրէն հրատարակութիւնը: Կրետէի 1866ի ապստամբութեան պատճառաւ թիւրքիոյ մասնաւիտն օրէնքը դադարուածի դատապարտուած ըլլալով Դուռը կրնար ըստ հաճոյս խափանել անհնազանդ թերթերը, ուստի և օրագրապետներն ալ կառավարութեան մեղմիկ փափաքներուն համակերպելու հարկը կը զգային: Այցելու պաշտօնեաները հետըզհետէ կ'ընդարձակէին իրենց իրաւասութեան սահմանները, միշտ քաղցրալեզու քաղաքավարութեամբ:

— Այս ինչ խնդրին վրայ բան մը գրած էք, հարցնելէ յետոյ, երբ պատասխանը հաստատական էր, կը փափաքէին փորձը անգամ մը տեսնել, և աննշան դիտողութիւններով կամ առանց ո' եւ է սրբագրութեան ետ կը դարձնէին: Ատեն անցնելէ յետոյ, երբ ալ օրագրողները ընտելացան առտուան այցելութեանց, գրաքննիչները ըսկսան «նայիք ինչ ունիք» ըսելով պահանջել ինչ որ առջ կը խնդրէին: Փորձերը նախապէս կարդալէ, որբարելէ յետոյ կ'ստորագրէին իբր վաւերացում, և «ասկէ դուրս բան պիտի չըլլայ» ըսելով կը մեկնէին: Կանխարգել գրաքննութիւնը հաստատուած էր:

Այս խստութիւնը կը գործադրուէր թիւրք մասնաւիտն, յոյն ու եւրոպական լեզուներով հրատարակուող թերթերուն զէմ. հայ խմբագրատունները ո' եւ է այցելութիւն չէին ընդուներ: Հայկական խնդիրը եւրոպական հարց մըն էր. պետութիւնները, եւրոպական մասուլը կը զբա-

ղէին անով, իսկ Հայաստան ու Պոլիս վրդովիչ շարժում
մը չէր տեսնուեր, ուստի եւ կառավարութիւնն ալ հայ մա-
մուլին վրայ բաց աչքերով հսկելու պէտք մը չէր զգար:
Անխոհեմութեան պարագայի մը դադարում կամ ջնջում
կը հրամայէր, ինչպէս Լրագիրը ջնջուեցաւ, Մասիսը եր-
կու ամսուան դադարումի դատապարտուեցաւ, Թերթիման
ու Մեհնուա շատ նեղութիւններ կրեցին:

Կանխարգել գրաքննութիւնը հաստատուելէն առաջ
ընդհանրապէս հայերը կը նշանակուէին տպագրական վե-
րատեսուչ: Այսպէս հետզհետէ Սագգ Յովհաննէս, Ստե-
փան Արզուման, Բերթէվ Էֆէնտիններուն յանձնուեցաւ
Կ. Պոլսոյ մամուլին վերին հսկողութիւնը. արդի սուլթա-
նին օրով այդ պաշտօնը իսլամներուն կը վստահացուի
միայն: Հիմակ Պոլսոյ Եւրոպական մամուլին վերատեսու-
չը հայ մըն է, Նշան Սէֆերեան:

Օրագրական գրաքննութիւնը հաստատուած միջոցին
տպագրական գրասենեկին տնօրէնը Մէհմէտ Էֆէնտի ա-
նունով անձ մըն էր. երոպական լեզուներ գիտցող, շատ
բան կարդացած, փիլիսոփայ մարդ մը որ խղճմտօրէն կը
վարէր իր պաշտօնը, ջանալով մամուլին շատ զգալի ը-
նել չի տալ անոր վրայ դրուած լուծին ամբողջ ծանրու-
թիւնը: Ու ճիշ մըն ալ անհոգ մէկը ըլլալով հարկ եղած
ուշադրութիւնը չէր ընծայեր թերթերուն հրատարակու-
թեանցը: Տեղական մամուլին ներկայացուցիչներուն փո-
խադարձ նախանձը փորձանք կը բերէր Մէհմէտ պէյի
զլխուն: Օր մը Լեվրնտ-Հերայտ անզլիերէն եւ ֆրանսե-
րէն լեզուներով հրատարակուող թերթը, իր անզլիական
բաժնին մէջ շատ ծանր տեղեկութիւն մը կը հրատարակե-
տուլթան Համիտի մասին: Լոնտոնի թերթ մը ծանուցած
էր թէ իսլամներուն խալիֆին հայրը հայ մըն է: Լեվրնտի
թղթակիցը պահարանի մէջ իր թերթին կը զրկէ այս հատ-
ուածը, որ անբացատրելի անզգուշութեամբ մը կը տպա-
գրուի, վրիպելով միանգամայն գրաքննիչին ուշադրութե-
նէն: Շաբաթներ կ'անցնին և այս հրատարակութիւնը կը
մոռցուի առանց ո՛ր և է ուշադրութիւն գրաւելու: Բայց եւ-
րոպական ուրիշ թերթի մը, Սրաւպուշի, Իրլանտացի տը-
նօրէնը օր մը զայն զիպուածով կը տեսնէ, եւ անմիջապէս
իր հայ թարգմանին հետ Դուռը վազելով ցոլց կուտայ
ներքին գործերու նախարարին: Մահմուտ Նէտիմ փաշա
ոարսափահար կը մնայ, անմիջապէս տպագրական տեսու-
չը կանչելով բացատրութիւն կը պահանջէ: Խեղճ Մէհ-
մէտ պէյը ինքնիրմէն ելած, շփոթած, կը խոստովանի թէ
ուշադրութիւն չէր ըրած: Նոյն րոպէին Լեվրնտ-Հերայտ
դադարումի հրաման կը ստանայ:

Բայց Պ. Հուրիթէքը, Լեվրնտի տէրը, ուրիշ օրաթերթի
մըն ալ արտօնութիւնը ունէր, Մոնիթոր ֆուկերսիայ, զոր
հրատարակելու համար նախապէս թողտուութիւն ինդրելու
էր. բայց իր գործը կը տեսնէ առանց այդ ձեւակերպու-
թեան: Ներքին գործոց նախարարը իրիկուն մը կառքով
կամուրջին վրայէն անցած ատեն թերթ ծախողներուն
բերնէն ֆրանսերէն նոր օրագրի մը անունը կը լսէ, հատ

մը անունը կուտայ, և յաջորդ օրը Մէհմէտ պէյը կը կան-
չէ, ցայց կուտայ և կուզէ իմանալ թէ ինչ թերթ է: Մէհ-
մէտ պէյ նորէն ինքզինքը կ'արդարացնէ ուշադրութիւն ըն-
ծայած չըլլալը յայտարարելով:

— Ճանրմ, Մէհմէտ պէյ, աս մինչև ե՞րբ ասանկ ան-
հոգ պիտի գտնուիս, ըսելով գործը կը վերջացնէ Մահմուտ
փաշա, այդ թերթին ալ դադարումը հրամայելով: Հիմակ
այս ամէնը առասպելական զրոյցներ կը թուին, եթէ նը-
կատողութեան առնենք այն զարհուրելի հսկողութիւնը
որուն ներքև կը գտնուի մամուլը:



Մինչև 1884 յունուար 1 Կ. Պոլսոյ օրագրութեան
մէջ ես գործօն դեր մը չեմ ունեցած. այդ թուականին Ա-
րևելքը հիմնուեցաւ, եւ վեց ամիս յետոյ Մասիսը նոր թեր-
թին մէջ ձուլուելով Կ. Պոլսոյ ամէնօրեայ հայերէն մա-
մուլը մասնաւոր խումբի մը մենաշնորհը եղաւ, ու մենա-
շնորհը մնաց մինչև 1891 յունիս 13, երբ Հայրենիք
հիմնուեցաւ: Արևելքի խմբագրութեան անդամ չէի: Թեր-
թը կը հրատարակուէր վեց անգամ բաղկացած վարչա-
կան խորհրդի մը հսկողութեան ներքև. աշխատութեան
բաժանումով իւրաքանչիւրնիս որոշ պարտականութիւններ
ստանձնած էինք: Ի միջի այլոց ինծի ինկած էր նաև թեր-
թին քաղաքական վերին հսկողութիւնը: Կէս օրին Արև-
ելքի մէջի երկու երեսներուն փորձերը ամբողջապէս կը
կարգայի, ինչպէս իրիկուններն ալ առաջին երկու երես-
ներունը, ու ինչ որ քաղաքական տեսակէտով վտանգա-
ւոր համարէի կը ջնջէի. այս ծանր աշխատութիւնը վեց
տարի կատարեցի, մինչև 1890 փետրուար 12, երբ
վարչութիւնը փոխուեցաւ, եւ ես հրաժարեալներուն մէջ
էի: Այս վեց տարուան մէջ միշտ ուշադիր կը հետևէի
Թիւրքիոյ ներքին քաղաքականութեան փոփոխութիւններուն
և նորանոր պահանջութիւններուն, և ըստ այնմ կը հսկէի
թերթին վրայ: Հայ թերթերուն վրայ կանխարգել դրա-
քննութիւնը 1888 հոկտեմբերին սկսաւ հաստատուիլ, հե-
տեաքար հինգ տարի ուղղակի մեր պատասխանատուու-
թեան ներքև հրատարակած ենք Արևելքը, առանց եր-
բեք օր մը խափանելու, թէև ազգային բազմաթիւ խըն-
դիրներու մէջ շատ առաջ գացինք: Իսկ անկէ ետքը ան-
գամ մը միայն տասը օրուան դադարումի դատապարտուե-
ցաւ Արևելք, սխալ հասկցողութեամբ մը:

Ես շատ խոհեմ շարժելու պարտաւոր էի: Թերթը
արտօնատէր մը ունէր, Պ. Ստեփան Տամատեան, որ եր-
բեք խմբագրատուն չէր իգար իր անունով և պատասխա-
նատուութեամբը հրապարակ եղած Արևելքը քննելու թէ
և ո՛ր եւ է վտանգաւոր պարագայի մէջ ամբողջ պատասխա-
նատուութիւնը իր վրայ պիտի ծանրանար: Վարչութեան
միւս անդամներն ալ նմանապէս փափաքող չէին թերթին
զագարմանը:

Այսպէս ուրեմն մենք մեզի կ'ընթանայինք մինչև 1888, երբ անսպասելի դէպք մը հանդարտութիւննիս խանգարեց:

Բիւթէրի գործակալութիւնը Կ. Պոլսէն անգլիական թերթերուն օր մը կը հեռագրէ թէ՛ Ազարեան պատրիարք Երջտըզը յայտարարեր է թէ կաթողիկոսութիւնը ազգայնութեան գաղափարներուն թշնամի ըլլալով, օսմանեան իշխանութիւնը մեծապէս պիտի նպաստէ հայկական դատին տկարացմանը, եթէ թիւրքիոյ մէջ կաթողիկոսութեան տարածումին նպաստէ: Այս հեռագիրը Արևելքի մէջ թարգմանուեցաւ, և մեծ վրդովում առաջ բերաւ: Լուրը հիմնապէս սուտ չէր, բայց չափազանցուած էր: Ազարեան պատրիարք խօսակցութեան մը մէջ սատրազամ ֆեւաճիլ փաշային կարծիք յայտնած էր թէ կաթողիկոսները ինքնավար Հայաստանի մը ստեղծագործման հետամուտ չըլլալնուն պատճառաւ, իրաւունք ունին կառավարութեան բարեացակամ պաշտպանութիւնը վայելել: Եպարզօտն ալ առթիւ մը Սերվիչէն էֆէնտիի կը խօսի այս նիւթին վրայ. ան ալ ուրիշներուն կը պատմէ, ու պարզ խօսակցութիւն մը իբր Երջտըզ տրուած տեղեկագիր մը մինչև Լոնտոն կը հաղորդուի:

Խաչին շաբաթ իրիկունը, 1888ին, Դոնէն հրաման եկաւ որ Արևելքի արտօնատէրը երկուշաբթի օր առտուան ժամը 4ին խմբագրատունը զըտնուի: Բայց նոյն օրուան տօնին պատճառաւ Արևելք չհրատարակուելուն տպարանն ալ զոց էր: Երեքշաբթի առտու ժամը 4ին զիպուածով ես գտնուեցայ խմբագրատունը. եւ ահա Մէհմէտ պէյ հետը ունեն ալով հայ պաշտօնեայ մը, հոն եկաւ: Սենեակ մը հրամցուցինք զինքը: Առանց երկար բարակ խօսելու, գրիչ և թուղթ բերել հրամայեց: Չէի գիտեր ինչ պիտի ըսէր. թիւրքերէնի թարգմանիչ խմբագիրը հրաւրեցի եւ խնդրեցի զրել պէյին ըսածները: Եւ ահա տեսայ թէ հերքում մըն էր Բիւթէրի հաղորդած լուրին: Բան մը չէինք կրնար ըսել. միայն թէ խմբագրին յայտնեցի որ այդ հերքումին վրայ «պաշտօնական» գրէ:

—Չէ՛, պաշտօնական չէ, դուք ձեր կողմէն պիտի տաք այդ հերքումը, ըսաւ Մէհմէտ պէյ:

—Բայց ինչո՞ւ մեր կողմէն հերքում պէտք է տանք լուրի մը զոր մեր կողմէն չենք հրատարակած, այլ թարգմանած ենք: Մենք այդ լուրին սխալ կամ ճիշտ ըլլալը չիտանք. եթէ թաշմզ հերքում գրէ պարտաւոր ենք հրատարակել. եթէ Դուրը կամ Ազարեան պատրիարք հերքում զրկեն զայն ալ կը հրատարակենք, բայց մենք մեր կողմէն միջամտելու պարտականութիւն չունինք. այս թերթը Ազարեան պատրիարքին պաշտօնական բերանը չէ, ըսի:

—Ես ատանկ բաներ չեմ հասկնար, ըսաւ տպագրական տեսուչը. ինչ որ կը հրամայեմ ան պիտի ընէք:

—Չենք կրնար պատասխանեցի զսպուած բարկութեամբ:

—Ինչ, գոչեց Մէհմէտ պէյ բարկութեամբ ոտքի ելլելով, ձեզի գրաքննիչ չեմ զրկեր անոր համար կ'ընէք այս բաները:

—Գրաքննիչը, ըսի, կրնայ բան մը վերցնել տալ, բայց չի կրնար բան մը հրատարակել տալ:

Ըտողը դո՛ւն ես մի. Մէհմէտ պէյին տաճիկութիւնը բռնեց. «ի վերայ այսր ամենայնի օրհնեալ ժողովուրդ, թագաւորնիս տա...ճիկ...է:» Յաւտեանական ճշմարտութիւնը: Խալամ մը որքան ալ լուսամիտ ըլլայ կարող չէ հրատարակ քրիստոնէին կողմէ ընդդիմախօսութեան հանդուրծել:

—Հիմա պիտի երթամ թերթը փակել պիտի տամ, ըսաւ:

—Կրնաս փակել տալ, բայց ուզածդ չես կրնար զըրել տալ եմ, պատասխանեցի հեգնութեամբ մը:

Ա՛լ մարդը սկսաւ քթախոտ քաշել, սենեկին մէջ վեր վար պտըտիլ ու բերնին տալ:

—Աս ի՛նչ է ձեր ըրածը. կրա՛կ, կրա՛կ կը ժայթքէք, աս ամէն օր է դանգատ կը լսեմ. ես գիտեմ ձեզի ինչ պիտի ընեմ, կը պոռար:

Ես ալ թիւրքերէն խօսիլ չգիտնալուս պատճառաւ շատ գէշ կը բացատրէի միտքս. զուցէ չուզածս կ'ըսէի, բայց ի՛նչ ընել. ու Մէհմէտ պէյ վայրկեան վայրկեան աւելի կը կատարէր:

Այս պահուս արդէն դուրսը խմբագիրները խելք կ'ընեն և մարդ կը հասցնեն պանքան, իզմիրլի օղլու խանը, ու վարչութեան անդամներէն երկու երեքը բերել կուտան. Անոնց ներս մտնելուն վրաս լուս իջաւ. տաճիկն ալ հանդարտեցաւ: Պաշտօնակիցներս գետնէն բարեւները տալէ յետոյ, ինէ խնդրեցին դուրս ելլել. դուրը փակեցին և երեքը մէկտեղ մնացին մինակ:

Ես գացի խմբագիրներուն սենեակը նստեցայ. կէս ժամ ետքը փակ դուրը բացուեցաւ, Մէհմէտ դուրս կ'ելլէր, ու վարչութեան երկու անդամները քանի մը անգամ գետնէն պաշտօնական բարեւները տալով մարդը մինչև սանդուղին զուլսը ճամբելէ յետոյ, բարկութեամբ վազեցին քովս:

—Մարդու հետ վարուիլ չիտես, ըսին. չէնք շընորհք համոզուեցաւ որ պաշտօնական պէտք է ըլլայ հերքումը:

—Դիմագրութիւնը ինէ տեսաւ, ձեր առջեւը կակղեցաւ, ըսի:

Հերքումը ուրեմն «պաշտօնական» վերնագրով հրատարակուեցաւ: Բայց ահա յաջորդ օրը Արևելքի արտօնատիրոջ հրաւեր եկաւ ուղղակի Ներքին գործոց նախարար Միւնիթր փաշային երթալ: Պ. Տամատեան հետը առնելով Վարչական խորհրդին ատենապետը որ իր պաշտօնին բերմամբ յարաբերութիւններ ունէր նախարարներու հետ, եւ զիս ալ՝ ի հարկին անմիջական խորհրդակցութեան համար՝ ելանք Դուրը գացինք: Երկուքը միայն

մտան նախարարին սենեակը: Մինիւր փաշա խստութեամբ զանոնք յանդիմանելէ յետոյ կը հրամայէ որ առաջին օրուան հերքումը պէտք է աւելի ընդարձակօրէն կրկնել թե՛ թին մէջ, նոյն իսկ խմբագրութեան կողմէն, վասն զի իր հրամանը եղած էր որ «Պաշտօնական» բառը պիտի չգործածուէր: Պ. Տաճատեան կը յայտարարէ թէ ինչ որ հրատարակուած է տպագրական տեսչին հաւանութեամբն է: Ու Մէհմէտ պէյ ալ գալով կը հաստատէ այս հաւաստումը: Մինիւր փաշա սակայն մճոռական կերպով կը հրամայէ իր հրահանգին անմիջական գործադրութիւնը հինգշաբթի օրուան համար, ապա թէ ոչ Արևելք նոյն օրը իսկ պիտի խափանուէր:

Երեքնիս խմբագրատուն վերադառնալով մեր միւս պաշտօնակիցներուն հետ խորհրդակցեցանք: Յայտնի էր թէ Մինիւր փաշա Ազարեան պատրիարքին ազդեցութեան ներքև էր: Միաբանութեամբ որոշեցինք Արևելքի զազարումը լաւագոյն համարիլ քան թէ այդ աւերաւ հրոմանին հպատակութիւն: Բայց միւս կողմէն ալ կ'ըմբռնէինք թէ ներքին գործերու նախարարին դէմ կոխի յայտարարութիւն մը որքան բազմաթիւ անպատեհութիւններ կը վերապահէր մեզի: Միջին ճամբայ մը գտնելու էր: Այս նպատակաւ Արևելքի վարչութեան անդամներէն ոմանք յանձնառու եղան Մինիւր փաշայի բարեկամ կարևոր հայու մը միջամտութեան զիմուս ընել: Գոցին անմիջապէս խնդրեցին այդ անձէն որ իր ազդեցութեամբը գոնէ մէկ երկու օր ժամանակ շահիլ տայ մինչեւ որ թերթն ալ հանդարտութեամբ իր ընելիքը կարենայ որոշել: Այդ անձը հինգշաբթի օր Մինիւր փաշայի երթալով կը խնդրէ որ գոնէ մինչեւ շաբաթ օր մտածելու ժամանակ տրուի Արևելքի: Մինիւր փաշա այս խնդրանքին կը հաւանի: Եւ ահա ուրբաթ օր Արևելքի մէջ խմբագրական յօդուած մը երևցաւ, ներքին գործերու նախարարին «լուսամիտ վարչութիւնը» զրուատող: Դեռ այն ատեն ներելի էր սուլթանին նախարարներուն գովեստ մը կարգալ: Անկէ ետքը կամաց կամաց հիմնովին փոխուեցան քաղաքական կեանքի ամէն պայմանները: Թիւրքիոյ մէջ օսմանեան նախարարի մը տրուած զրուատիքները զուցէ այնքան մեծ ոճիւր կը համարուին որքան հակասուլթան յեղափոխականի մը շոյալուած գովասանքները: Հայ օրագրութեան ներքին գործերուն անտեղեկները երբեք պիտի չկրնան բացատրել թերթերուն մէջ յանկարծ երևցած շարք մը յօդուածներու պատճառները:

Արևելքի այդ զրուատականը նոյն օրը իսկ թիւրքեցիներն թարգմանուելով շաբաթ առտու կանուխ Մինիւր փաշայի գրասեղանին վրայ դրուեցաւ: Իրիկուան դէմ Պ. Տաճատեան եւ վարչութեան ատենապետը խոնարհաբար ներկայացան նախարարին, որ ա'լ առջի մարդը չէր: Շատ քաղաքավարութեամբ կը վարուէ, հայրաբար կարգ մը խրատներ կուտայ, և կը յանձնարարէ զգուշանալ այնպիսի անխոհեմ հրատարակութիւններէ որոնք իրեն ալ

զլուու ցաւ կը պատճառեն: Մերիններն ալ բոտ սովորութեան, գետնէն փաշային էրկը առնելով սրախութեամբ կը մեկնին: Միջադէպը փակուած էր: Բայց երկու երեք շաբաթ ետքը առտու մը գրաքննիչ մը կանգնեցաւ հայ թերթերուն գլխին:

Ա. Ա.

ԹԻՒՐԲԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ

Ծայրագոյն—Արևելքի խնդիրը բացուած սահման ըզգացինք մեր Արևելքին վրայ անոր ունենալիք ազդեցութիւնը: Առ այժմ այդ ազդեցութիւնը մեզի պահագու պատճառելու հանգամանքը չունի: Սուլթանը և զինքը շրջապատող խմբակը ի բոլոր սրտէ չինական յաջողութեանց ցանկացող են, և կը յուսան թէ երոպական պետութիւնները մեծ պարտութիւն մը կրելու դատապարտուած ըլլան: Թիւրքերը կը կարծեն թէ այդ կողմէն մէջ դիր մը պիտի կատարեն, գոնէ բարոյապէս, քրիստոնէութեան դէմ հանելով Ասիոյ ոչ—քրիստոնեայ ուժերը:

Եւրոպա հասած կարգ մը լուրերը որոնց ստուգութիւնը տակաւին երաշխաւորեալ չէ սակայն, կասկածել կուտան թէ իսլամները Չինացիներուն հզօր օժանդակութիւն մը պիտի ընձեռեն: Պերլինէն կը հազարուի թէ չինացի իւնկ—լու զօրավարը վերջերս Թուրքաստան երթալով յաջողեր է միւսիւման զօրավար Թունկ—Ֆուշանկին բարեկամութիւնը շահիլ. ու այս վերջինս 30,000 իսլամ զօրքի զլուխը անցած Չինաստան եկեր է: Չինացիները կրօնական հարցերու անտարբեր են. աւելի ընկերային եւ ազգային խնդիրներն են որ զիրենք Եւրոպացիներուն դէմ կողմ կը մղեն. իսկ իսլամները պարզապէս կրօնական վայրագ ատելութեամբ մոլորանդաբար կը կողմին քրիստոնէից դէմ: Կը վախցուի թէ Չինացիները զուցէ ամբողջ իսլամական աշխարհը քրիստոնէութեան դէմ հանելու յաջողին, եւ կրօնական ահեղ պատերազմ մը սկսուի: Պերլինի մէջ մտքերը կը խռովին Կ. Պոլսոյ համիսլամական թերթերէ ոմանց օւղղութիւնը զիտելով: Խիստ գրաքննութեամբ հրատարակուող այդ թիւրք օրագիրները գոհունակութիւն կը յայտնեն չինական յաջողութեանց համար, եւ Դեղին ցեղը կը հրաւիրեն արշաւել Եւրոպա եւ լուծել չրէժը այն բոլոր ստորնացուներուն զոր Ասիոյ ժողովուրդները եւրոպականներէն կրած են:

Այս հրատարակութիւնները իսլամին սրտին գաղտնի ըզձանքները վեր կը հանեն, ու անոր մտքին հակումը երևան կը բերեն, բայց իսլամին ո'չ խորհուրդները, ո'չ փափաքները կրնան իրականանալ: Հարիւր միլիոններով

համբուռող խուժան մը ուժգնապէս կազմակերպուած եւ-
րոպական սակաւաձեռն ուժի մը առջեւը կը տկարանայ,
կ'ոչնչանայ, թէ և ատեն մը կրնայ դիմանալ:

Այդ ժամանակամիջոցէն է որ սուլթանը կ'ուզէ օգ-
տուիլ, և Հայոց դէմ հալածանքները սաստկացնել, ինչպէս
կը տեսնուի մեր լուրերու բաժնին մէջ Էնիս փաշայի տըր-
ուած պաշտօնէն: Սուլթանը անգամ մը եւս իր քաղա-
քական կարծատեսութեան ապացոյցը կուտայ, և անշուշտ
Չինական հաշուէյարգարութեան վերջացումէն յետոյ Երւ-
տըզ նոր վիճակի մը մէջ պիտի գտնուի:

Իսկ առ այժմ Պոլիս ղեսպանատունները զբաղեցնող
խնդիրը պիտաւորապէս մաքսի յաւելումին թրքական պա-
հանուծն է: Բայց այս խնդրին մէջ Եւրոպայի բոլոր
պետութիւնները իբր միաձուլ ամբողջութիւն մը չեն ներ-
կայանար: Ուրիշ են մեծերուն իրաւունքները, ուրիշ պըզ-
տիկներունը: Դուրը կարող չէ իր պայմանները մեծ պե-
տութեանց պարտաւորիչ ընել, վասն զի ֆարքիթիւլասիոն-
ներով կաշկանդուած է: Բայց այդ սեղմումէն ազատ է
պզտիկ իշխանութեանց հետ իր առեւտրական յարաբե-
րութեանցը մէջ: Օգտուելով այս առաւելութենէն թիւրք
կառավարութիւնը հրաւիրեց Ռուսիան, Սերպիան եւ
Յունաստանը առեւտրական նոր դաշնագիրներ կնքելու,
բայց ասոնք չկարծեցին թէ օսմանեան իշխանութիւնը ա-
ռեւտրական կտրուկ ու կորովալիւր ընթացքի մը կրնայ
հետևիլ, ուզեցին Դուրը խաղցնել. եւ ահա յանկարծակիի
եկան երբ թիւրքիա ներմուծած ապրանքներնին ամե-
նածանր տուրքերու ենթարկուեցան: Խեղքերնին ան
ատեն զլուխնին եկաւ. եւ խնդրեցին Դոնէն որ մինչեւ
առեւտրական նոր դաշնագիրներու կնքուիլը նախկին քա-
րիֆաներու համեմատ մաքսերը առնուին. բայց այս ա-
ռաջարկը մերժուեցաւ: Դուրը չուզեր նոր կարգադրութեան
մէջ ո՛ր եւ է փոփոխութիւն մտցնել. մինչեւ որ դաշնագիր-
ները յատրաստուին եւ ստորագրուին: Երեք պզտիկ
պետութիւնները սուլթանին դիմած են, բայց հաւանա-
կան չէ որ նախարարական ժողովին որոշումները շնջուին:

Իսկ Պուլկարիա աւելի բարեբաստ կը գտնուի: Դուրը
չուզելով զայն իբր անկախ պետութիւն մը նկատել հարկ
տեսած է հետը մասնաւոր կարգադրութեան սը յանգիլ.
ու այս նպատակաւ ալ թիւրք եւ պուլկար խառն յանձնա-
ժողով մը պիտի պատրաստէ մաքսային նոր քարիֆան:

Մեծ պետութիւններուն հետ սակայն Դուրը դժուա-
րին կացութեան մէջ կը գտնուի. անոնցմէ ո՛չ մէկը
թիւրքիոյ առաջարկները ընդունելու տրամադիր կ'երեւի,
զոնէ ամբողջութեանը մէջ: Գերմանիան, որ միշտ սուլ-
թանին հաճոյակատար երեւնալու փափաքը ունի, իր հա-
ւանութիւնը տուած է Դրան առաջարկութեանց. բայց
գիտէ թէ գործնականին մէջ ո՛ր եւ է նշանակութիւն մը
պիտի չունենայ իր հաւանութիւնը, քանի որ միւս պե-
տութիւնները, յատկապէս Ռուսիան, վճռական ընդդի-
մադրութիւն որոշած են: Դուրը ճարահատեալ, անցած

ամիս վերստին դիմեց պետութիւններուն եւ անոնց հաւա-
նութիւնը խնդրեց մաքսի առ ժամայ հարիւրին երեք
յաւելման առաջարկին, բայց տակաւին անոնց հաճու-
թիւնը ստացած չէ:

Մաքսի յաւելումը եթէ տեղի ունենայ իսկ թիւրք կա-
ռավարութիւնը պիտի պարտաւորուի հասոթներու առա-
ւելութենէն մեծկակ բաժին մը հանել Հանրային Պարտ-
քին, որուն վարչութիւնը յենյով Մուհարէմի հրամանագրին
վրայ, արդէն հիմակուց կը պահանջէ յաւելումին ար-
տադրելիք առաւելութեան ամբողջութիւնը: Անշուշտ Դու-
րը այս օրինական պահանջումին մասամբ եւ եթ գոհացում
պիտի տայ:

Հիմակ ընդհանուր կացութիւնը քիչ մը աւելի կը
ժպտի սուլթանին քան թէ ասկէ առաջ: Չինական խնդիրը
զինքը առ այժմ ազատ կը թողու պետութեանց անմիջա-
կան հսկողութենէն, ու մաքսի յաւելումի ձեռնարկները
զանձային նեղ վիճակին ապագայ փոքր ինչ բարելաւաց-
մանը յոյսերը կուտան: Բայց սուլթանին էն մեծ ուրա-
խութիւնը պիտի ըլլայ Տամատ Մահմուտ փաշային չէզո-
քացումը: Թէև տակաւին ստոյգ տեղեկութիւն մը չու-
նինք, բայց կը կասկածուի թէ սուլթանին պատուիրակը
Ահմէտ Ճէլալէտտին փաշա որ Բարիզ կը սպասէ ամիս-
ներէ ի վեր, սուլթանին քեռայրը սիրաշահիլ պիտի յաջո-
ղի: Երիտասարդ թիւրքերու նոր պետը որ քանի մը շա-
բաթ առաջ Լոնտոն եկած էր, իր բանակատեղը հոն
հաստատելու համար, այժմ վերադարձաւ Բարիզ, ուրկէ
Ժընէվ կը շուէ:

Կը զրուցուի թէ Ահմէտ Ճէլալէտտին փաշա առանց
շատ դժուարութեան յաջողեր է սուլթանին քեռայրը հա-
մոզել որ Զուլեյքիա անցնելով հոն չէզոք դիրք մը բռնէ,
մինչեւ որ օր մըն ալ Պոլիս վերադառնայ:

Պէտք է ընդունիլ թէ Տամատ Մահմուտ փաշա Լոն-
տոն չէր կրնար մնալ, վասն զի շատ ցուրտ ընդունելու,
թիւն գտաւ: Թրքատեաց անցլիացիները չուզեցին ո՛ր եւ է
համակրանք ցոյց տալ փաշայի մը որ հայկական կոտո-
րածներուն հանդիսատես եղած էր առանց բողբոջակու
ձայնի մը. և Պոլսէն կը փախչէր այնպիսի միջոցի մը երբ
ո՛ր եւ է ծանր նոր դէպք մը չէր պատահած: Իսկ թըր-
քասէրները, որոնք իրենց շահերուն պատճառաւ Երւ-
տըզի հետ կապեր ունին, չուզեցին ո՛ր եւ է մեծարանք ըն-
ծայել անոր որ իբր սուլթանին հակառակորդը կը ներ-
կայանար:

Խտիվին Լոնտոն այցելութիւնն ալ ծանր հարուած
մը եղաւ Տամատ Մահմուտ փաշայի վարկին: Մինչ կը
կարծուէր թէ Խտիվը ու Ահմէտ Մուլթար փաշան Տա-
մատ Մահմուտ փաշայի հետ խորհրդակցելով հակա-
սուլթանական ծրագիր մը պիտի պատրաստեն Լոնտոն,
ահա տեսնուեցաւ թէ Խտիվը և սչ իսկ իր ներկա-
յութեանը ընդունիլ ուզեց սուլթանին դէմ ըմբոստացող
փաշան, իսկ Մուլթար փաշա Եւրոպայի մէկ անկիւնը

մոտցում մնաց:

Սոփոկլէս Իդիպոսի բերնով հոշակած է թէ՛ ոչ մէկ մահկանացու վերջնապէս երջանիկ պէտք է համարի, մինչև մահուան ժամը հասնի: Մենք ալ կրնանք ըսել՝ ոչ մէկ թիւրք վերջնապէս յեղափոխական համարելու է, մինչև մահուան ժամը հասնի:

ԼՈՒՐԵՐ

ԻԶՄԻՐԼԻԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ. Երանոր տեղեկութիւնները կը հաշատեն թէ նախորդ Պատրիարքին ստղծական վիճակը հետզհետէ աւելի կը վատարասնայ: Երուսաղէմի վանքին մէջ բոլորովին երեսի վրայ մնացած լքեալ է: Միսնգաւանցն նիւթական կացութիւնն ալ շատ խեղձ է: Այս ամենաստոյգ տեղեկութեանց վրայ ո՛րև խորհրդածութիւն աւելցնելու պէտք չենք զգար. ամէն հայ իր պարտականութիւնը թո՛ղ իր խղձին հարցնէ:

ԿԻԼԻԿԻԱ. Կ. Պոլսէն յուլիս 7 թուականով թայմզիկ կը հեռագրուի թէ սուրբանը Հայկաթի կոչակալ անուանած է Տիարպէքիթի նախորդ կոչակալ Էնիս փաշան: Եւր վախին յուլիս 6ին գաղտագողի Պոլսէն մեկնել է դեպի Հայկա, եւ իր անուանումը պիտի հրատարակուի պաշտօնատեղին հասնելէ յետոյ: Էնիս փաշա 1895ին Տիարպէքիթի կոտորածը կազմակերպեց և գործադրեց այնպիսի վայրագութեամբ մը զոր սուրբանը իսկ չէր յոշտար: Պետութեանց բողոքին վրայ այդ մարդակերպ գազանը պաշտօնակն էղաւ, ու սուրբանը միեւն հիմակ չէր համարձակած ո՛րև է տեղ մը Էնիսը կոչակալ անուանել: Օգտուելով պետութեանց Չիւնաստան ունեցած ըզբաղումէն, սուրբանը անմիջապէս Կիլիկիա կը դրկէ այդ ոճրագործը: Բայց դեսպանական ընդդիմադրութենէ վախեալով չէ ուզած այդ յոշտին տարածումը, միեւն ուր վախին տեղը հասնի:

ՉԵՐԲԱԿԱՆԻԹԻԻՆՆԵՐ. Յուլիս 7 շարք օր Պոլիս 100 հայ ձերբակալուներ են. ասոնցմէ ոմանք երկիրն են արտոններ, ուրիշներ ալ բանտարկուներ են: Թայմզի բղբակիցը այս նոր խտտութիւնը հեռագրելով գայն կը վերագրէ Երիտասարդ-Թիւրքերուն կողմէ դեսպանատունները յանձնուած յայտարարութեան գործին: Յայտնի է թէ այդ յայտարարութեան ո՛չ հեղինակները յայտնուեցան, ո՛չ ալ գայն դեսպանատունները տուողները գտնուեցան: Թէ սուրբանը եւ թիւրտեսական խոշորը կը մտածեն թէ հայերը միայն կարող են այդքան գաղտնապահութեամբ գործ մը տեսնել, ոչստի Հայոց իրայ կասկածելու պէտք կը զգան: Իսկ ֆրանսական քեր-

բերեն ոմանք ալ կը ծանուցանեն թէ երկու հայ յեղափոխականի Պոլիս մտած ըլլալու տեղեկութիւն մը ասնուած ըլլալով ձերբակալութիւններ վերակալուներ են:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ. Կ. Պոլսէն յուլիս 11 թուականով կը հեռագրուի թէ Ռուսիոյ դեսպանը նոր ծանուցագրով մը Դոնէն պահանջեր է 3,000 Հայոց համար թիւրքիս վերադասուելու անմիջական թոշտուութիւն: Առնել չեն պատկանիր եղեր 40,000 գաղթականներու, այլ աստուտութեամբ գրադողներ են որոնք օրինաւոր անցագիր ալ ունին:

Միևնոյն ժամանակ կը հեռագրուի թէ սուրբիւրք աստուրական պայմանադրութիւն մը կնքելու բանակցութիւնները սկսած են Պոլիս: Յոշտանք թէ հայ վաճառականներուն համար տու կասաւարութեան այս հոգածութիւնը աստուրական դաշնագրին մէջ տու վաճառականութեան նպատուտը պայմաններու գետեղումը դիւրացնելու նպատակաւ եղած չըլլայ:

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ. Տէլի Բրոնիկի կը հեռագրուի թէ սուրբանը պարտաւորուներ է խոնարհիլ ամերիկեան պահանջումներուն առջև: Երեք ամսուան մէջ իսցեալ-Նահանգներուն պիտի վճարէ 100,000 տուրքի գումարը որ կը պահանջուի իր հայկական կոտորածներուն ատեն միսիւնարներու կրած վնասին փոխարինութիւն:

ԹԻՒՐԿԻԱՅ տնտեսական ու երկրագործական կացութիւնը ոչստանասիրելու համար սուրբանը յանձնաժողով մը կազմել է Թերիս փաշայի նախագահութեամբ, եւ անդամակցութեամբ ներքին գործերու եւ երկտական նախարարութեանց պաշտօնակներու:

ՀԱՍՅԷ ԵՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տուրք:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին ղրկել ա՛

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.